

5.3. Մասնավոր հատվածի գարգացման պլանը

- ➔ Մասնավոր հատվածի գարգացման պլանը կազմելու և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՎԱՏԿԵՐ-2005»-ի հիմնական բաղկացուցիչը:
- ➔ Հայաստանի գարգացումը կախված է հայ ծեռնարկատերների ակտիվ դերակատարությունից: Երկրի համակարգերն ու տնտեսական միջավայրը պետք է դյուրին դարձնեն գործարար մարդկանց գաղափարների կենսագործումը:
- ➔ Պլանի մշակման և իրականացման նպատակով պետք է ի մի բերվեն և գործադրվեն բոլոր տնտեսաքաղաքական միջոցները:
- ➔ Հարկային խթաններն արդյունաբերական գարգացմանը սատարող կարևոր միջոց են: Փոխադրումների ոլորտում եղած սահմանափակումների պայմաններում՝ իր նպատակներին՝ օրինակ, օտարերկրյա ներդրումների ներդրագմանը հասնելու համար Հայաստանում անհրաժեշտ է կիրառել հզոր և խիստ գրավիչ հարկային խթաններ:
- ➔ Ոչ բանկային հատվածի բերի գարգացումն այն գործոններից մնեն և, որոնցով պայմանավորված է բանկերի կողմից գանձվող տոկոսադրույթերի բարձր մակարդակը: Կառավարությունը պետք է քայլեր ծեռք առնի խթաններու ոչ բանկային ֆինանսական հաստատությունների գարգացումը:

5.3.1. Զարգացման ռազմավարությունը և մարտավարությունը

Մասնավոր հատվածի գարգացման պլանը պետք է ձևավորվի, ելնելով 5.1-ում բերված նախադրյալների ընկալումից: Այն պետք է մշակվի 5.2-ում ուրվագրված՝ գարգացման միջնաժամկետ պլանի մտապատճերի ստեղծմանը գուգահեռ: Մասնավոր հատվածի գարգացման պլանը հանդիսանալու է գարգացման միջնաժամկետ պլանի մտապատճերի հիմնական բաղադրյալը:

Պլանավորման ռազմավարությունն ու մերոդաբանությունն ըստ Էության նույնն են, ինչ շարադրվել է բաժին 5.2-ում, քայլ ունեն հետևյալ շեշտադրումը:

- 1) Հայաստանի գարգացումը կախված է ծեռնարկատերների ակտիվ դերակատարությունից: Զանազան համակարգերն ու կառույցները, ինչպես նաև տնտեսական միջավայրը պետք է հեշտացնեն ծեռներնց մարդու գաղափարների իրագործումը և արդյունավետ հատուցում ապահովեն վերջինիս գործադրած աննկուն ջանքերին:
- 2) Հետազոտման առարկա հանդիսացած 3 նպատակային ենրահատվածների բոլոր ծեռնարկություններում էլ կիրառվում էին ՆԽՄ-ի դարաշրջանից ժառանգած կառավարման մերոդները, և կառավարիչների միայն փոքր մասն էր, որ օժտված էր ծեռնարկատիրական ոգով: Սակայն, մյուս հատվածներում (օրինակ՝ սննդի արդյունաբերությունում կամ առևտությունում) կան շատ եռանդրում և շնորհալի գործարարներ, և սա հավաստվել է նաև ԼICA-ի

հետազոտական թիմի կողմից (ստվերային տնտեսությունում գործողների ծեռնարկատիրական ռգին ինքնին կարիք չունի որևէ հաստատման): Հայաստանի տնտեսական իրավիճակը շատ խոշընդունելի է դժում ծեռնարկատերների սոցեև հարուցում դժվար հիմնահարցեր: Ի հետեւնք, հաջողակ ծեռնարկատերները ստիպված են լինում կուծել իրենց նկատմամբ մի մասը կամ այսուղ ու այնուղ ապավինել նկատմամբ բարեկված աղբյուրներին:

Սույն սլանի ներքո կառավարության գլխավոր խնդիրն է վերացնել կամ նվազագույնի հասցնել առկա խոչընդուները և նախապատրաստել բոլոր գործարարներին ու ծեռնարկություններին գործառնելու հնարավորություն ընծեռող տնտեսական պայմաններ և, դրանով իսկ, ստվերային տնտեսությունը ներգրավել օրինական գործունեության դաշտ և խրանել երկրի երկարաժամկետ զարգացման առումով ուղղման ուղղման նշանակություն տեսքող նախոտակային հատվածները:

Վերը նշվածի վերաբերյալ սուածարկվող գործնական միջոցառումները ուրվագրված են կետ (1)-ում և ստոյթ:

(1) Զարգացման գերակայությունները

Առաջնություն պետք է տրվի 1) արտահանելի ասլրանքների ու ծառայությունների արտադրությանը, 2) ներմուծմանը փոխարինող արտադրությանը, և 3) երկրի երկարաժամկետ զարգացման առումով կարևոր դեր խաղացող հատվածների խրանմանը:

Վերը նշված 1) խմբում ներառված են՝ արտահանական վերամշակող արդյունաբերությունը, որը ծագիման համար ներմուծում է հումք և արտահանում պատրաստի արտադրանքը. հատվածները, որոնք քարձրորակ ուսուրանքներ, նյութեր և ծառայություններ են ապահովում վերոհիշյալ 3 ոլորտներին. հետազոտությունների և մշակումների հատվածը, սպայմանագրային հետազոտական գործունեությունը՝ գիտական բնագավառում. համակարգչային ծրագրերի սրատրաստումը. գրոսաշրջության և առաջարանային հատվածը, որ արտադրությի աղբյուր է հանդիսանում:

Ներմուծմանը փոխարինող հատվածը՝ 2)-ը ներառում է այն շատ ապրանքների հայրենական արտադրությունը, որոնք ներուժ ունեն հաջող մրցակցելու ներմուծված ապրանքների հետ և գնի, և որակի տեսակետից: Որոշ դեպքերում այսուղ կներառվեն նաև այն ճյուղերը, որոնք պետք է մրցունակ դարձվեն՝ անկախ դրա համար պահանջվող միջոցներից ու ջանքերից:

Օրինակ, բանջարեղենը, կարնամբերը և միար ներմուծվում են Վրաստանից և Իրանից, բայց Հայաստանի կլիման բարենպատ համեմատություն ունի Վրաստանի և Իրանի

Յկատմամբ: Հայաստանում աճեցված բանջարեղենը, ասենք՝ լոխիլը և փարունգն իրոք օժտված են լավ համային հաստիանիշներով։ Մշակված սննդամբերի առողմակ հետազոտական թիմի կարծիքն այն էր, որ լրանք, բացասուրյամբ Եվրոպայից ներմուծված ապրանքների, ցածրորակ չին և անսիրտան։ Ըստ ներմուծվող սննդամբերի օգտագործման ժամկետը նույն էր ավարտին կամ արդյն իսկ անցել էր։

Ներմուծված են բազմատեսակ յոգուրտներ, այդ թվում Գերմանիայից։ Հայկական մածունը որպես առողջարար սննդն նույնքան արժեքավար է, որրան որ ներմուծվող յոգուրտը։ Մածունի մանրէները տարրեր են՝ կախված շրջանից, և առկա են մածունի մանրէների հարյուրավոր տարատեսակներ։ Աշխարհի մի քանի առաջատար լընկերուրյուններ հետազոտում են մածունի մանրէների օգտակար տպանցուրյունն առողջորյան վրա։ Եթե ապրանքն այնպես մշակվի, որ կարողանա բավարարել սպառողների պահանջները, ապա Հայաստանի սպառողներն անկասկած կնախընտրեն մածունը։

Զգայիրուն ավելի բարձր որակի այս ապրանքները նույն գնով կարելի է արտադրել Հայաստանում, ընդ որում կատարելով ոչ մեծ ծավալի ներկրումներ, բայց սյատշաճ կերպով ապահովելով արտադրական գործընթացը և որակի վերահսկությունը։ Ներմուծվող թերեւ արդյունաբերական ապրանքները, բացառուրյամբ բարձրակարգ ապրանքների սահմանափակ ծավալի (սրանք ևս հաճախ մակնիշային պատճենակումներ են), բնուրագրվում են ցածր որակով։

Հայերը սպատմական ժամանակներից ի վեր աշքի են ընկում հմուտ ծեռքերով և օժտված են նորր ու բարեկիրք ճաշակով։ Ի տարրերուրյուն ՆԽՄ-ի այլ նրկրների ժողովարյունների, որոնց առավել բնորոշ է ճաշակի անկատարուրյունը։ Հայաստանում առ այսօր էլ պատրաստվում են հարուստ ճաշակով նախշագծված բարձրորակ և հյուսաշար գորգեր։ Կարի գործն իր մեջ պարունակում է շատ հայ կանանց գործով ասլահովելու զգալի ներուժ։ Մի քանի օտարերկրյա լընկերուրյուններ, ներառյալ մեկ կանադական, արդյն հաճատնդ արտադրուրյուն են ծնունարկել Գյումրիում և այլ վայրերում։

Ինչ վերաբերում է կաշվե ապրանքներին, Հայաստանում հնարավոր է արտադրել միջազգային շոկաններում մրցունակ ապրանքատեսակներ։ Ստվերային տնտեսուրյունում կամ բավական նուանուն գրքարարներ, որոնք Խոտիհայից ներմուծում են կոճակներ ու լրապարագաներ, իսկ ապա արտահանում պատրաստի հազուսուր՝ զանազան մակնիշների ներքո։ Եթե այն համբավը, որ Հայաստանում արտադրված կոշիկներն ու կաշվե բաճկոնները որակով չեն գիշում իտալականին, բայց ավելի լժան են, հնարավոր չինի ներ դնել արտերկրյա շոկաններում, ապա ապրանքները կարող են հալարտորեն վաճառվել «Պատրաստված է Հայաստանում» պիտակով։

Ներմուծվում են շատ կահույք և տնօսին պարագաներ: Այնինչ, տարբեր նրբաճաշակ փորագրություններ անող և քանդակներ տարբող հայ վարպետների որակավորման մակարդակը բույլ է տալիս արտադրել կահույք, որն ընդունելի որակ կունենա ոչ միայն հայրենական, այլև հարևան շուկաների համար: Այն, ինչ պահանջվում է, ուս ձևերի հետ կատարված հարցերի և սպառողների ճաշակների մանրագննին ուսումնասիրությունն է: Կահույքի ներմուծումն առնչվում է փոխադրման բարձր ծախսերի հետ, և զնային տեսակետից հայկական ապրանքներն ավելի բան մրցունակ կլինեն:

Հայաստանին ներհատուկ նյութից սրբարատված գանձագան կահավորանքն ու պարագաները գրավիչ են համաշխարհային շուկայի համար: Տարբեր շուկաների կարիքները բավարարող ապրանքների շուկայավարման ու մշակման, ինչպես նաև վաճառքի անհրաժեշտ ջանքերի գործադրման միջոցով կարելի է առաջ մղել Հայաստանի ներքին ուսուրաների և արհեստագործների օգտագործմանը բարձր ավելացված արժեքով արտահաննելի ապրանքների արտադրությունը:

Մրանք օրինակներ են, թե ինչ է հնարավոր անել, ելնելով ձեռքի տակ նդած ուսուրաներից: Երև մարդիկ գործի մեջ դնեն իրենց միասնական իմաստությունը, ասկա ի հայտ կգան զարգացման շատ ու շատ ավելի հնարավորություններ:

3)-ը ընդգրկում է մի ամրադր շարք ոլորտներ, որոնք սերտորեն կասլված են վերը նշված 1)-ի և 2)-ի խորանան հետ: Այստեղ պետք է նկատի ունենալ բարեկավումների իրականացումը սոցիալական ներակառուցվարձությունը, ներսոյալ օդանավակայանները (Չեշտադրումը՝ համակարգչային կողմի վրա, այդ բվում՝ ինչ վերաբերում է կառավարմանը և օգտվողներին հարմարությունների ապահովմանը), ճանապարհները, հաղորդակցությունը, հյուրանոցները: Բնոլգրկված են նաև մետաղի՝ մոխրենի, պղնձի և ոսկու հանքային ուսուրաների շահագործումն ու արդյունավետ արտադրության կազմակերպումը: Տարրականից սկսած մինչև համալսարանական մակարդակը կրբության համակարգի կատարելագործումը և մարդկային ուսուրաների զարգացման բարեկավումը՝ օրինակ, մեծահասակների վերակրթման ծրագրերի միջոցով՝ նույնպես ներառված են 3) խմբում:

(2) Արդյունաբերական զարգացման քաղաքականությունը

1) Իդեալական արդյունաբերական քաղաքականությունը

Արդյունաբերական զարգացման քաղաքականությունը պետք է համապատասխանության մեջ լինի բաժին 5.2-ում սուածական ազգային զարգացման միջնաժամկետ պլանի՝ «ՀԱՅՎԱՏՎԱԾՈՒ ՍՏԱՊԱՏԿԵՐ-2005»-ի հետ, և ծառայի որպես արդյունաբերական զարգացման պլանի կևնազործման իրատեսական հենք: Արդյունաբերական քաղաքականությունը, հատվածների խրանքան միջոցով, պետք է գործնական հնար

սարահովի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱԴԻՑԿԵՐ-2005»-ին, որը կարելի է համարել ազգային միջնաժամկետ գարգացման հիմնարար սլան: Պահն ստեղծելու ժամանակ ելման կետը կարեւոր նշանակություն ունի:

Անհրաժեշտ է հստակ կերպով գնահատել Հայաստանի արդյունաբերության վիճակը: Ապա անհրաժեշտ կլինի վերլուծել և գնահատել Հայաստանի արդյունաբերության ուժեղ և բռույ կողմները, նրա գարգացման ներուժը և տնտեսական կենունակությունը՝ հաշվի առնելով արտածին գործոնները, ներառյալ ֆիզիկական գործոնները, միջազգային նրգակցությունը և պահանջվող ֆինանսավորման հնարավոր աղբյուրները:

Ինչպես արձարձվել է 2.2.2.(1)-ում, Արդյունաբերության և առևտի նախարարության կազմում կան քաղաքականությամբ գրադփուլ մի քանի քամիներ, որոնք, սակայն, համապատասխան հաստիքների քացակայության սրատճառով ըստ Էորյան չեն իրականացնում որևէ շղափնի գործունություն: Այսպես որ, սլանավորման խնդիրները պետք է հանձնարարել կարուրունակ և նշատակամղված աշխատողների:

Քաղաքականության հիմնական խնդիրների գատորշման նպատակով առկա պայմանների վերլուծության փուլում հարկ կլինի, որ մասնավոր հատվածում տիրող կարծիքների լայն սպեկտրը գտնի իր արտացոլումը: Այս գործընթացն արժեքավոր կլինի նույն պետական ծառայողների ապագան խրանելու առումով: Յուրաքանչյուր ծեռնարկության առջև ծառացած են բազմարիվ հիմնահարցեր, և ծեռնարկություններն օրը բանցրս մաս պայքար են մրտւ դրանց դեմ: Հաջողակ ծեռնարկությունների շարրում կան այնայինները, որոնք ապավիճում են իրենց կողմից սահմանված քաղաքականության իրականացմանը, քանի որ չեն կարծում, թե կարելի է հույս դնել կառավարության կողմից համապատասխան քաղաքականության իրականացման կամ օժանդակության ցուցաբերման փա: Այս ծեռնարկությունները լավ գիտնեն, թե ինչ քաղաքականություն պետք է վարի կառավարությունը, և ի գորու կլինեն ներկայացնել իրատևսական առաջարկություններ:

Ամենակարեւոր գործոններից մեկը՝ դա արդյունաբերության կառուցվածքային քարեփոխումն է: Պետք է ընդունվի այն իրականությունը, որ Խորհրդային համակարգի ներքո քարգավաճած մեծ արդյունաբերական ծեռնարկությունները, որոնք ժամանակին արտադրում կին մեքնայորեն պատվերով ապահովված արտադրանք, այժմ մեռած են կամ դարձել են փոքր հատվածների քաժանված միավորներ և հազիվ են կարողանում գոյատևել դեֆիցիտների ծանրության տակ: Բացի այդ, հարկ է ելնել և այն նախապայմանից, որ Հայաստանը գործնականում չունի առաջատար որևէ ճյուղ:

Զարգացման գերակայությունները, որ որպազրվել են (1)-ում, գրեթե ամբողջությամբ

կարեկի է կիրառել արդյունաբերական բաղաքանականության նկատմամբ։ Այսուհանդերձ, արդյունաբերական հատվածի (Հիաշված կենտրոնացվետիկան) խրանման միջոցով պետության կառավարման առանցքային խնդիրները լուծելու հետ կարգած հարցերը պետք է ասհմանվեն հետեւյալ կերպ։

- համայստան ներին արտադրանքի ո՞ր մասն իր վրա կարող է վերցնել տնտեսության այս հատվածը։
- աշխատողների ի՞նչ բարանակ կարող է այն կլանել։
- ի՞նչ նպաստ կարող է բնել հատվածը երկրի առևտրի հաշվեկշռի բարելավմանը։
- որո՞նք են նպատակներին հասնելու առավել արդյունավետ բաղաքանական գործիքները։
- որտեղի՞ց է ծեռք բնել ֆինանսավորումը։

2) Քաղաքականության գործիքները

Ֆինանսներին, հարկային համակարգին, ներդրումներին, օրենքներին և համակարգերին վերաբերող խրանման միջոցներն ուրվագրված են ամեն մի համապատասխան բաժնի գլխամասում։

3) Այլ երկրների (գարգացող տնտեսությունների) արդյունաբերական քաղաքականության օրինակների հետազոտումը

Հայաստանում բացատեղյակ են Ռուսաստանի և Կանտոնական և Արևելյան Եվրոպայի անցումային բաղաքանականությանը և այնտեղ տեղի ունեցող գործընթացներին, մանավանդ որ վերջիններս ել աջակցություն և ուղղվածություն են ստանում ԱՄՀ-ից և Համաշխարհային բանկից։ Սակայն, այսուղի բավարար ուշադրություն չի դարձվել Արևելյան Ասիայի երկրների որդեգրած գարգացման բաղաքանականությանը, որոնք պակաս գարգացածից վեր են ածվել գարգացող տնտեսության և կամ կ գարգացող երկրից դարձել են գարգացած երկիր։

Հայաստանի գարգացման բաղաքանականությանը ճշգրիտ համար լավ կիֆնի աշքի առաջ ունենալ հաջող օրինակների մի ընդգրկուն ցանկ։ Հետազոտական խումբն առաջարկում է, որպեսզի հայկական կառավարությունն ուսումնասիրի արդյունաբերական բաղաքանականության սյանսավորման և իրականացման այն գործընթացը, որ որդեգրվել է Արևելյան Ասիայի երկրներում։ Նման ուսումնասիրման առարկա կարելի է գտնել Մինչապորում, Մակարդակայում և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում։

Իրենց գարգացման ուզմավարության ժամանակային կողմով և ուղղվածության առումով վերը նշված երեք երկրները տարրերվում են միմյանցից։ Մինչապորը բնեղվել է առևտրի ու ֆինանսների գործառնական կենտրոն դառնալու վրա և բարենպաստ ներդրումային

միջավայր ծետվորելու նպատակով ներդրումներ և արել ներակտուցվածքներում նախահանգառային շինություններում, հաղորդակցության որբառում, ճանաւարիաշխնորյան և գանազան գրասնայակների կառուցման մեջ, ինչպես նաև ոչ ֆիզիկական կառուցներում, և այս ամենը թիրել է այն հաջողությանը, որ երկիրն այսօր ճաշակում է:

Մալայզիայի բարգավաճումը ձեռք և թերվել շնորհիվ Էլեկտրատեխնիկայի և Էլեկտրոնիկայի ընկերությունների ներգրավման, մեծ ճասանմք՝ Շինասանուն, սկսած Դես Այասինի «Փաղաղության հարավային նախաձեռնորյունից», նահանգները մրցակցում էին օտարերկրյա ներդրումների հատկաւութեա վերամշակող արդյունաբերության բնագավառուն խրանման բաղադրականություն խրանմացներու գործուն, և արդյունքուն հաջողվեց հասնել արտահանման շեշտակի ընդլայնմանը, ինչն էլ իր հերթին պայմանավորեց տնտեսական աճի բարձր տեմպերը: 1997թ. վերջին Շինասանուն արդեն մի ամուր տնտեսական հաստատություն էր, որի արտաքինայի պահուստը կազմուն էր 140 միլիարդ ԱՄՆ դոլար, այնժամ երբ 1988-ին այն ընդամենը 3,4 միլիարդ էր: Ընդհանուրն այս երեք երկրների համար՝ դա օտարերկրյա կապիտալի ինտենսիվ ներդրումն է և տնտեսական աճի բարձր տեմպը: Սինգապուրուն մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 1996թ. հասել էր 30 հազար ԱՄՆ դոլարի:

Տեղեկանքի ձևով ստորև բերվում է երեք երկրներուն օտարերկրյա կապիտալի ներդրման և արտաքինայի պահուստների դինամիկան 1991-ից մինչև 1996թ. ընկած ժամանակահատվածուն:

Այլուսակ 5.3.1.1 ՕՌԵ-Երի դինամիկան 3 երկրներուն (միավորը՝ միլիարդ ԱՄՆ դոլար)

	(Հիմք)	1991	1992	1993	1994	1995	1996	Արտաքինայի պահուստը		
								1988	1996	1997
Մինգապուր	Դաստառուն	1,4	1,7	2,0	2,8	3,4	4,0	16,9 ↑	76,9 ↗	71,3
Մալայզիա	Դաստառուն	6,2	7,0	2,4	4,3	3,7	6,8	6,5 ↑	27,0 ↗	20,8
Շինասան	Իրազործուն	4,4	11,0	27,5	33,8	37,5	42,3	3,4 ↑	105,0 ↑	139,9

(Աղյուրը՝ Տնտեսական պլանավորման գործակալություն, ճապոնիա)

Ստորև համառոտ կերպով ուրվագրվում է Էլեկտրատեխնիկական և Էլեկտրոնիկայի արդյունաբերության զարգացման նպատակով Մալայզիայի կառավարության որդեգրած բաղադրականության մոդելը:

ա) Սկսած 1960-ական թվականներից՝ արդյունաբերացման նախական փուլից, Մալայզիայի կառավարությունը հատուկ շեշտ և դրել վերամշակող հատվածի Էլեկտրատեխնիկական և Էլեկտրոնիկայի ճյուղի խրանման վրա: 1970-ականներին նախաձեռնվեց ազատ առևտուրի գոտու (ԱԱԳ) ստեղծումը, գուգակցված անհրաժեշտ

Ենթակառուցվածքների՝ Էլեկտրականուրյան, ջրամատակարարման, հեռախոսային կապի, ճանապարհների և կոյուղու ցանցի ավանդուվամբ: ԱԱԳ-ում արտադրության համար պահանջվող նյութերի և բաղադրիչների ներթուժումն ազատված էր հարկումից: ԱԱԳ-ը ստեղծվել էր արտահանական՝ իրնոց արտադրանքի ավելի քան 80%-ն արտահանող ճյուղերի համար:

բ) Մալայզիայի կառավարությունը գրավիչ հարկային խրաններ էր տրամադրել ներդրողներին՝ առանց որևէ ազգային խորականուրյան: Այս հարկային խրանները ծայրաստիճան արդյունավետ գտնվեցին օտարերկրյա ներդրումներ ներգրավելու գործում: Այսուղի կարևոր գործոն հանդիսացավ նաև Լժան աշխատուժի առկայությունը:

գ) 30 տարի առաջ իր գարգացման նախնական փուլից ի վեր կիսահաղորդիչների արդյունաբերությունը Մալայզիայում գնալով բարգավաճում է: Կիսահաղորդիչների արդի արտադրությունը հիմնականում հավաքման բնույթ է կրում, բայց և այնպես Մալայզիան այս առումով հանդիսանում է աշխարհի երեք խոշորագույն կենտրոններից մեկը: Սպառողական էլեկտրոնիկան Մալայզիայի առաջատար ճյուղերից մեկն է: Մալայզիան ներգրավել է շատ օտարերկրյա ներդրողների, մասնավորապես՝ Շապոնիայից, և դարձել է օլումինիներ, գումավոր հեռուստացույցներ և սույն տեսասարքավորում արտադրող և արտահանող գլխավոր երկրներից մեկը:

դ) Մալայզիան իր գարգացման ճանապարհին ստեղծել է Նրկարածամկետ մտապատճեններ (Ուրվագիծ 2020ր. համար, նոր տնտեսական քաղաքականություն): Ի լրումն, Մալայզիայում մշակվել են տնտեսական գարգացման միջնաժամկետ պլաններ (Պնտական գարգացման սլաններ)՝ յուրաքանչյուրը 10 տարվա կտրվածքով: Բացի այդ, մշակվել են նաև կարճաժամկետ՝ 5-ամյա պլաններ: Ի հավելումն, պատրաստվել են արդյունաբերության գարգացման երկու 10-ամյա հիմնարար պլաններ, որոնք հստկապես շատ արդյունավետ եղան վերանշակող հատվածի առաջ մղման գործում: Էլեկտրատեխնիկան և էլեկտրոնիկան երկրի տնտեսական քաղաքականության ներքո միշտ էլ ստացել և գնրակայություն:

(3) Արտահանման խրաննան քաղաքականությունը

Արտահանման խրաննան առումով ամենակարևոր խնդիրը՝ դա նպատակային շուկաների պահանջները բավարարող արտահանելի ապրանքների արտադրությունն է: Արդյունաբերական ապրանքների ցանկը, որ Հայաստանը կարող է արտահանել, խիստ սահմանափակ է: Հայ գործարարների և արդյունաբերողների միությունը դիմել է

Կառավարությանը՝ խնդրելով ցոյց տալ հետևյալ աջակցությունը.

- արտահանման խրանման աջակցություն.
- օսարերկրյա գործընկերների առաջարկում.
- փորձագիտական աջակցություն.
- ֆինանսական աջակցություն.
- հարկային գեղշերի տրամադրում:

Ի լրումն վերտիշյապի, որպես ընթացիկ խնդիր բարձրացվել է նաև բնոնափոխադրումների հիմնահարցը, և շատերը մատնանշել են ցամաքային սրամապորտով ասեմանները հատկապես հետ կապված հոգսերի թերևացման անհրաժեշտությունը: Սա դյուրին լուծվող հայց չէ, բայց եթե կառավարությունը ճեռք տոնի Վրաստանի հետ տնտեսական կազերն ամրապնդող քայլեր, ապա կարելի կինի հասնել վիճակի գոմե մասնակի բարեկավմանը:

1) Արտահանման շուկաների կացությունը

Արտահանման շուկաները կարելի է դասակարգել չորս խմբերի.

- **ԱՊՀ երկրներ.**
- հարեան երկրներ (Իրան, Միջին Արևելք, Եգիպտոս, այլ).
- զարգացած երկրներ (ԵՄ, Հյուսիսային Ամերիկա, Բարձրության)։
- զարգացող երկրներ (Հարավ-արևելյան Ասիա, Աֆրիկա, Կենտրոնական և Հարավային Ամերիկա):

Այս շուկաներն իրարից տարրերքում են սպառողների ճաշակով, տեղեկությունների ծեռքբերման դժվարությամբ, լեզվով, խրանման եղանակներով և այլնով:

ա) Արտահանման գործի փորձառության կուտակումը

Ձեռնարկություններին, ընդհանուր առմամբ, պակասում է արտահանման կազմակերպման փորձն ու կարտությունը: «Առնորի կետ Հայաստան»-ը և ԶՀԳ-ն ի վիճակի են սպահովել արտահանման և ներդրումների խրանմանը վերաբերու որոշ հիմնական գիտելիքներ և տեղեկություններ, սակայն խիստ սահմանափակ բյուջենի, մարդկային ռեսուրսների, տեղեկատվական բազայի և փորձառության պայմաններում դեռևս չեն կարողացել դառնալ իրենց հաճախորդների վատահորյունը վայելող հաստատություններ: ԶՀԳ-ը պետք է ջանք բավի տեղեկություններ հավաքել շուկայի շափի, մրցակցության, տեխնոլոգիայի մակարդակի և այլնի մասին, որպեսզի հարկ եղած դեպքում համապատասխան ծառայություններ մատուցի հաճախորդներին: Գոյություն ունեն տեղեկությունների ճեռք բերման այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են զարգացած երկրների մեծ մասում ստեղծված՝ ներմուծման խրանման կազմակերպությունները:

ճապրնիայում JETRO-ն (ճապոնիայի արտաքին տունորի կազմակերպությունը) սլասուկան կազմակերպություն և սրատաշանառությունը և ներմուծման խրանքան համար: Այն տեսաժարագումների և երատադակումների միջոցով շուկայական տեղեկատվություն և տալահովում բարձր ներուժ ունեցող ներմուծական ապրանքների մասին: Զարգացող երկրներից ներմուծումը խրանքան նպատակով, կազմակերպությունն առանձին դեպքերում նույն հոգանակությունը և ներմուծական տունորի ցուցահանդեսների անցկացումը:

բ) Շուկաների բնորոշ գծերը

- Զարգացած երկրների շուկաներում առկա են շուկայափարման, տեխնոլոգիաների, հոմքի, յուրահատուկ սարքավորման արտադրության և Ներապայմանագրային հայրաքաղաքյունների առումով ուսումնակարական գործընկերներ զտներու հնարավորություններ: Այսուղ նաև կարելի է ձեռք բերել անհրաժեշտ գործնական գիտելիքներ, ինչ վերաբերում է ապրանքի որակի տայահովմանը, գների սահմանմանը, արտադրական համակարգերի գործառնությանը, շուկայափարման նղանակներին և ընկերության կազմակերպմանը:

- **ԱՊՀ երկրները Հայաստանի ավանդական տունորային գործընկերներն են:** Այս երկրների համախորհների/զնորդների հետ լեզվային հաղորդակցության հիմնահարց չկա և փոխընդունեան հասնելու դյուրին է: Սակայն, ի հետևանք ՆԽՍՇ-ի փլուզման և շուկայական տնտեսության անցնելու ճանապարհին ԱՊՀ երկրների կրած դժվարությունների, վերջիններիս շուկայական սլայմանները ներարկվել են խոշոր փոփոխությունների: Մասնավորապես, արտահանողների համար լորջ խնդիր են հանդիսանում պահանջարկի շեշտակի անկումը և վճարումների հետ կարգած անորոշությունը:

- Հայերն ընդիանոր առմամբ տեղյակ են հարեւան երկրների շուկաների մասին: Իրանից Հայաստան են ներմուծվում բազմաթիվ էժանագին ապրանքներ: Խնդիրն այն է, որ այդ ապրանքների արտադրման ծախսը Իրանում ավելի ցածր է, քան Հայաստանում: Այս շուկաներից օգտակար դասեր կարելի է առնել այն մասին, թե ներմուծմանը փոխարինող և արտահանական արտադրություն գորգացնելու գործում որքան կարենք է հասնել զնային և որակային ճրցունակության ապահովմանը:

գ) Արտահանման տեղեկատուի պատրաստումը

ԶՀԳ-ում ընթացքի մեջ են արտահանման տեղեկատուի պատրաստման աշխատանքները: Յանկը ներառելու և ձեռնարկության անվանումը և արտահանելի ապրանքը: Ձեռնարկությունների արտադրման հին ու գունաքափ լրացնկարները և արտադրանքի անձակ ներկայացումը կարող է բերեն հակառակ արդյունքի, այսինքն՝ կարդացողների

մոտ ստեղծեն այն կարծիքը, որ Հայաստանն ի վիճակի և արտադրության միայն ցածրութակ առլրանքներ:

ԶՀԳ-ի ֆինանսական միջոցները բույլ չեն տալիս հրատարակել հարմար տեսք ունեցող տեղեկատու: Տեղեկությունների բարձրացումն էական նշանակություն ունի, բայց աշխատատար լինելու համգամանքը խնդիրներ կարող է առաջ բերել: Ծառ դեպքերուն առաջին հրատարակությունից ինտո բարձրացնան հարցը ճուացության է ճատնվել, ինչը բերել է զետեղված տեղեկությունների նկատմամբ օտարերկրյա ներմուծողների և հայրենական արտահանողների վատահության կորստին:

դ) Մասնակցությունն առևտրային տոնավաճառներին

Մասնակցությունն առևտրային տոնավաճառներին կարեղ է ոչ միայն ապրանքները ցուցադրելու, այլև գնայ՝ գալու ճանապարհին շուկայական տեղեկություններ հավաքագրելու տեսակետից: Ամենակարևոր բանն է տեղյակ լինել օտարերկրյա մրցակիցների արտադրած ապրանքների տեխնիկական ճակարդակի և նրանց նոր մշակումների ուղղության մասին:

ե) Գործընկերների որոնումը

Անհրաժեշտ է եռանդուն կերպով որոնել արտահանման գծով հնարավոր գործընկերների՝ ներմուծման գործականների, ներմուծողների, վաճառողների, տեխնիկական արտանագրողների և արտոնագրյալների:

զ) Փորձագիտական աջակցությունը

Ի լրումն շուկայավարման, արտադրական տեխնոլոգիաների և կառավարման հարցերուն օժանդակության, ծեռարկություններին հարկ է օգնել նաև վերը նշված հմտությունների ծեռքերման խնդրում: ԶՀԳ-ը պետք է խորի վերապատրաստման այնպիսի մի ծրագիր ձևանարկելու մասին, որի միջոցով անհրաժեշտ գիտելիքներ կմատուցվեն առևտրային տոնավաճառին պատրաստվելու, շուկայական հետագոտության եղանակների, արտահանման համատեղ խրաննան, հաճախորդի հետ հաղորդակցվելու և գործնական հետևողականության վերաբերյալ: Հավանաբար կարիք կիմնի, որ վերապատրաստման ավարտից հետո ԶՀԳ-ը շարունակի աջակցություն ցույց տալ մասնակից ձեռնարկություններին:

է) Ֆինանսավորումը

Սա արտահանելիս ձեռնարկություններին դիմակայող միակ խոշորագույն հիմնահարցն է: Սկզբունքային խնդիրն այստեղ այն է, որ շրջանառու միջոցների սակագության պատճառով հնարավոր չի ապահովել արտադրության համար հումքի և նյութերի ծեռքերումը: Ծառ

դեպքերում կան նաև դժվարություններ, կապված արտահանական կարողությունն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ միջոցների հայրայրման հետ:

2) Քաղաքականության գործիքները

Այս հիմնահարցերին լուծում գտնելու համար պետք է ձեռք առնվեն քաղաքականության հետևյալ միջոցառությունները:

ա) ԶԴԳ-ի ամրապնդումը

ԶՀԳ-ն արտահանման խրանման և օտարերկրյա ուղղակի ներդրումների համար իրական «One-Stop-Shop» մեկ կանգառի կենտրոն դարձնելու նպատակով հարկ է մեծապես անբարեկ նրա գործառույթները, բյուջետային միջոցները և մարդկային ռեսուրսները (մանրամասն բնարկումը տեսն բաժին 5.4 (5)-ում):

բ) Զարգացման միջոցների ապահովումը

Կառավարությունը պետք է անհրաժեշտ աջակցություն ապահովի շահազրդիւ և նպատակամիջված հայկական ձեռնարկություններին՝ ստեղծելով մի կառույց, որը մերժ պայմաններով ֆինանսական միջոցներ կտրամադրի ապրանքներ ու ծառայություններ արտադրելու և արտահանելու (ներառյալ՝ ներմուծմանը փոխարինելու), ինչպես նաև նոր արտադրանք մշակելու համար: Կոնկրետ կառույցին վերաբերող առաջարկները ներկայացված են բաժին 5.4.-ի (1)-ում և (2)-ում:

գ) Հարկային աջակցությունը (տեսն 5.3.2.(2).)

դ) Ժամանակակից առևտրային ընկերության խթանումը

Հայաստանում կան բազմաթիվ փոքր առևտրային ընկերություններ, որոնք հիմնականում տևզակայված են Երևանում: Արտահանումն ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է խրանել մի բանի արդիական առևտրային ընկերությունների գարգացումը: Առևտրային ընկերությունները բազատեղակ կլինեն միջազգային առևտրի կանոններին և ավանդույթներին և կիրառական բանակցություններ վարել առևտրային գործընկերների հետ: Ռենենալով նման կարողություն, առևտրային ընկերություններն ի վիճակի կլինեն շահել առևտրային գործընկերների և ֆինանսական հաստատությունների վստահությունը: Անհրաժեշտ կլինի, որ դրանք ի սկզբանե լինեն բավականաչափ կապիտալացված և հաստիքավորվեն միջազգային առևտրի բավարար գիտելիքներ ու փորձառություն ունեցող մարդկանցով: Արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ եքել հարկային գեղշ կիրառվի արտահանումից եկամուտների և ֆինանսական օժանդակության նկատմամբ (այս վերջին դեպքում՝ արտահանման սվելացման շափին համամասնորեն):

(4) Սեփականաշնորհման մեթոդաբանության կատարելագործումը

1) Գնահատումը

Փոքր ծեռնարկությունների գնահատումն ըստ էության կատարված և համաձայն հաշվարկի՝ հիմնված գրաված տարածքի մակերեսի և տեղադրությամբ պայմանավորված արժեքի: Խոչոր միջազգային մրցույթները պատրաստված են ներդրումային բանկիրների կողմից: Գնահատման հիմնահարցը վերաբերում է նիշին և մեծ ծեռնարկություններին, երբ գնահատման ելակետ է ընդունվում հաշվեկշռային արժեքը:

Սեփականաշնորհման նախարարությունում քննարկվում են շահույրի և կանխիկի հոսքի վրա հիմնված գնահատման եղանակները: Վերջիններս, որոնք լայն օգտագործում են գույղ Արևմուտքում, հեշտ չի լինի կիրառել Հայաստանում, քանի որ ներկայումս շատ դժվար է պահանջնել կանխիկի հոսքը: Այսուհենդերծ, նշված եղանակները պետք է որպես գործառության մեջ, որովհետև դրանք, տնտեսության և ծեռնարկությունների կայտնացմանը զուգընթաց, ավելի ու ավելի համապատասխան կրառության իրականությանը: Գնահատման այս եղանակները կիրառելի են նաև ֆոնդային՝ արժեքների բորսայի համար: Ներդրումային բանկիրները սովորաբար կատարում են մի քանի տիպի գնահատում՝ հիմնված ակտիվների, եկամուտների, աճի տեսայի, կանխիկի հոսքի, համեմատևելի բազմապատճենների և այլնի վրա: Այսուղ բոլոր արժեքներն իրարից տարբերվում են, քայլ մատնանշում են քննարկման ննրակա արժեքների լայնույթը:

2) Սեփականաշնորհման նախապատրաստումը

Սեփականաշնորհման մասին 1997թ. դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածը շատ լավ է բացարձում լնրացակարգը: Պատասխանատու նախարարությունները պետք է սպահովեն տեղեկություններ ֆինանսական դրույթամ մասին և պատրաստեն նյութափարական և տեխնիկական գործունեության պլանը, ինչպես նաև մշակեն բարելավման առաջարկություններ: Վեստների պատճառները գատորոշելու նպատակով նրանք կարող են դիմել սույնիտորական գործակալությունների և, սնհրամեշտության դեպքում, կազմավորել ժամանակավոր փորձագիտական խմբեր, որոնք կոչված կլինին որոշարկել առանձին հատվածներում կառուցվածքային փոփոխությունների իրականացման ուղղությունները:

Պահանջվում է անել հետևյալը: Առաջարկում ենք Արդյունաբերության և առևտուրի՝ ծեռնարկությունների առավել մեծ բանակ վերահսկող նախարարությունում ստեղծել մի առանցքային խումբ: Ռազմավարության և վերակառուցման գծով մասնագիտացած որևէ ծանրակիո խորհրդատվական ֆիրմայի փորձագետները պետք է երկարաժամկետ

խորհրդաստվորյան տարածովեան նշված խմբի անդամներին: Առանձին ճեղքարկությանը խորհրդաստվորյան տրամադրելու համար վերջիններս կօգտագործեն ժամանակավոր փորձագետների ծառայությունները: Հարկ է ճեղքի տակ ունենալ խմբեր, որոնք ճեղքարկությանը կօգնեն կազմել ֆինանսական հայտարարագործական հաշվետվորյուններ:

Ներկա օրենքի իրագործումը կապված է դժվարությունների հետ, քանի որ դիչ են որակյալ կառավարիչները: Սույն ծրագիրը պետք է սկսել 2 կամ 3 ճեղքարկություններից, իսկ ապա և, ուսուլսների գոյացմանը համընթաց, ավելացնել դրանց քանակը:

3) «80/20» Պետական ճեղքարկությունների կառավարումը

Պետական ճեղքարկությունների կառավարումը սկսվում է վերը նկարագրված ճեղքի հետո: Հենց սեփականաշնորհումը սկսվում է, օրենքը սահմանափակում է նախարարությունների գործողությունների ճեղքարկությունների նկատմամբ (հոդված 8): Սակայն, կարևոր նկատառում է պահպանել և, հնարավորության դեպքում, բարձրացնել ճեղքարկության արժեքը: Հետեարար, կարեւոր համագումանը և, որպեսզի փորձագետները դեկանավարեն գնահատումը և ուսումնավարական ուղղվածությունը: Պետք է գտնվեն այնպիսի կառավարիչներ, որոնք ի վիճակի լինեն հետևելու նշված ուսումնավարական ուղղվածությանը, և հարկ կլինի դիմել դրսից փորձագետների օգնությանը:

4) Մաս-մաս վճարումը

1997թ. դեկտեմբերի օրենքից երեսում և, որ մինչև 10 տարի ժամանակահատվածով մաս-մաս վճարումները կիրառվում են միայն փոքր ճեղքարկությունների առումով: Այս դրույթը լավն է, քանի որ փոքր ճեղքարկությունները չունեն ֆինանսավորման ալբյուներ, և սա բոլոր և տասնիս արդար լուծում գտնել հիմնահարցին:

Ինչպես հետևում է սեփականաշնորհման հրապարակվող ազդագրերից, սեփականաշնորհումը և վճարումն իրականացնելու համար գնորդներին կամ հայտողներին տրվում է 2 ամիս ժամանակ: Սա պետք է որ դժվար խնդիր լինի և հավանարար բացառում է որոշ գնորդների նաևնակցությունը:

Չնենք կման պետք է առնվի փայտասնական սեփականատիրումը ֆինանսավորելու նպատակով հիմնադրամի ստեղծման հնարավորությունը, հատկապես ինչ վերաբերում է աշխատանքային կոլեկտիվներին: Միջոցները կարող են ճեղք բերվել Քրթուրյանի հիմնադրամից և բանկային համակարգի միջոցով տրամադրվել ներդրողների խմբերին: Աշխատադիմների խմբերը կարևոր է կազմակերպել ԵՏՕՐ-ի՝ աշխատադիմների արժեքային սեփականատիրման ծրագրի ճեղքի: Այս միջոցով հնարավոր կլինի սեփականաշնորհման գործընթացում ներգրավել առավել շահագրգիռ և համձնառու կողմերին:

5) Բաժնեմասային ընտրանքները

Եթե ծեռնարկությունը հասնի դրական արդյունքների, ապա մետական բաժնի մի մասը կարելի է նախատես սահմանված կարգով փոխանցել մասնավար բաժնետերին կամ/և աշխատողներին: Այս մի բանի տարրա զերացրում կարող է կազմել բաժնետոմսերի 5 կամ 10%-ը: Պետության նվազած բաժնեմասն ի վերջո կարող է ավելի շատ եկամուտներ բերել պետությանը, և ծեռնարկությունը կլունա տնտեսության չափորարեր ու արդյունուվետ բարձրացնաբերը:

6) Սեփականաշնորհման ազդագրման համար իրապարակված

տեղեկությունները/սահմանված ժամկետները

Թերյուն սպառումակած տեղեկությունները խիստ անրավարար են, և բանիմաց ներդրությանց հիման վրա հազիվ թե կարողանա հիմնավորված որոշում կայսացնել ներդրության կատարելու մասին: Սի այլպիսի բարգմանված ազդագրում ես ոչ մի նշում չգտա վաճառքի ծավալի վերաբերյալ: Բնականոն լինելու համար մրցույթը պետք է իրականացվի երկու բայերի կիրառմամբ.

- առաջինում պետք է ներկայացվի շահագրգռվածությունը՝ հաստատված մտադրության մասին ուղղաձառվ: Աս պետք է հիմնված լինի իրավարակված որոշ հիմնական տեղեկությունների վրա.
- երկրորդ փուլում, որ կոչվում է «պատշաճ հաստատակամություն», հարկ է առահելվել առավել մանրամասն տեղեկություններ: Առյօն տեղեկությունների շրջանակը, տվյալ փուլի ժամկետն ու գործընթացը պետք է պարունակվեն մտադրության մասին ուղերձություն կամ դրա հավելվածում: Վաճառող կողմին կարող է պահանջվել «ջրացանցման մասին համաձայնագրի» կնքում:

Խոշոր կամ միջին ծեռնարկություններին առնչվող մրցույթների պարագային սեփականաշնորհման առաջարկության ժամկետը կարող է տևել 35 օր, իսկ գործն ավարտին հասնելը՝ ևս մինչև 2 ամիս: Սեղմ ժամանակիցոցը դրսից ներդրողներին բույլ չի տալիս մինչ հայտ ներկայացնելը տեղյակ դառնալ ծեռնարկության իրական վիճակին:

7) Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունները

Որպես կանոն այս պարտավորությունները ենթակա են անհապաղ կատարման և դրանով խսկ վանում են որոշ ներդրողների: Կախված հանգամանքներից, արժե բննության առնել որոշ վճարումների հետաձգման կամ երկարաժամկետ պարտքի (նույնիսկ՝ սեփական միջոցների) փոխակերպման հնարավորությունը:

8) Թափանցիկության ապահովումը

Սեփականաշնորհման գործընթացում ամենակարևոր տարրերից մեկն է սպահովել որպեսզի մարդիկ ի վիճակի գտնվեն վստահ լինելու, որ սեփականաշնորհման գործընթացը, սկսած ծեռնարկության գնահատումից և վերջացրած սեփականաշնորհման կամ վաճառքի գործարքի կնքմամբ, իրականացվել և ազնիվ և արդար ճանապարհով: Խուսափելու համար 2.2.2-ում նկարագրված դեմքերից և վճասակար տանկուներից, որոնք տանում են հանրության վստահության կորստին, էական է տունդեն այնպիսի սրայմաններ, որ հրապարակվեն հնարավորիս լայն տեղնկություններ և գործընթացը տեղի ունենա տուսվելագույս բափանցիկ կերպով: Սեփականաշնորհման նախարարությունն այս առումով շատ ջանքեր է բափում, սակայն անհրաժեշտ են շարունակական և ընդգրկուն միջոցառումներ:

9) Սեփականաշնորհումից հասույթի օգտագործումը

Առ 1999թ. հունվարի 1-ը, սեփականաշնորհումից կառավարության հասույթը կազմել է նոտավորապես 90 միլիոն ԱՄՆ դոլար, բայց պարզ չէ, թե ինչպես է օգտագործվել այդ գումարը: Եթե սույն միջոցների մեծ մասն ուղղվել է բյուջեի դեֆիցիտի ծածկմանը, ապա ներկա պահին կարելի է միայն սփառության մասին՝ և լնդամենը:

Հետագա սեփականաշնորհման պարագային, տակայն, անհրաժեշտ կյինի ապահովելու որպեսզի հասույթն օգտագործվի համաձայն նախօրոք սահմանված նպատակների: Հետագուտական թիմի նույնցումն այն է, որ նման եկամուտների առնվազն 50%-ը հարկ է ուղղել Հայտատանի արդյունաբերության խթանմանը: Ի մասնավորի, հատկապես ցանկալի կյինի այդ միջոցները հատկացնել Զարգացման բանկին, ՓՄՁ-երի աջակցման հիմնարդամին և մյուս համակարգերին, որոնք կոչված կյիննեն աջակցել Հայտատանի մասնավոր հատվածի ծեռնարկություններին, ինչպես առաջարկված է 5.4. (2)-ում և (3)-ում:

(5) Ներդրումների խթանման քաղաքականությունը

Բարձրագույն առաջնորդյուն պետք է տրվի այն ճյուղերում հայրենական կամ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանմանը, որոնք կարող են արտադրել առկա նակարդակի համեմատ ավելի մեծ ավելացված արժեքով ապրանքներ ու ծառայություններ, և որոնք կարող են վաստակել օտարերկրյա արժույթ կամ պահպանել այն:

1) Ներդրումների խթանման հենքը

Ներդրումային միջավայրը Հայաստանում, ներառյալ օրենսդրա-դատական համակարգը, օտարերկրացիների փայամասնակցության սահմանները, աշխատելու բույլտվությունը,

բնակվելու բռնշտվորյունը, հարկային հսկակարգը և մարտատրքերը, ընդհանուր առժամբ անցել է ձևավորման փուլը:

Ավելորդ է ասել, թե հայկական տնտեսության ներկայի և ապագայի առանով ի՞նչ կենսական ճշանակություն ունեն ներդրումները (Խայրենական թե օտարերկրյա) մասնավոր հատվածում: Այն փաստի գիտակցումով, որ երև շահկի բնրացիկ հաշվեկշռի խոշոր դեֆիցիտի հետ կապված իրավիճակը, այս երկիրն արտասահմանի հետ իր գործարքներում կրախվի անվճարութակության հիմնահարցի հետ, Հայստանի կառավարությունը պետք է առաջնահերք գերակայություն տա ապրանքների ու ծառայությունների արտահանման (Աերայալ՝ ներմուծման փոխարինման) ներուժ ունեցող ճյուղերում օտարերկրյա ուղղակի ներդրումների առաջ մղմանը:

Այս ամենը, ի նկատի ունեմալով մինչ օրս կառավարության հետապնդած ներդրումային բաղադրականությունը, դեռ բավարար չի: Փաստորեն, բացի «Արմենտել»-ի, կոնյակի գործարանի և մի քանի հյուրանոցների վաճառքից, որևէ խոշոր օտարերկրյա ներդրութ չի կատարվել: Վերաճակող հատվածում եղել են փոքր ներդրումներ: Ներդրումների խրանման բաղադրականությունն արդյունք է ունեցել այն, որ ներդրումներն իրականացվել են փոքր առևտրային ծեռնարկություններում և ներքին սպառմանը կողմնորոշված ճյուղերում: Զիաշված ոչ մեծ բվով աշխատատեղերի ստեղծումը, չկա որևէ անհրաժեշտություն տնտեսարարական աջակցություն ապահովել անալյոնով խմբաներ արտադրություն ներգրավմանը, որոնք ըերուժ են սուսկ ներմուծման և ներքին սպառման ընդլայնմանը (այս կարգի ծեռնարկությունները հավանաբար նույտ կգործնեն շուկա, անկախ այն բանից՝ ցանկալի՞չ նրանց ներկայությունը, թե՞ ոչ):

Պայմաններ պետք է ստեղծվեն հեշտացնելու օտարերկրյա ուղղակի ներդրումներն այնպիսի՝ ճյուղերում, որոնք կարող են ապահովել աշխատատեղերի ավելացում, արտահանման ընդլայնում կամ ներմուծման կրծատում, և կառավարությանը հարկ է եռանդուն և հաստատակամ կերպով հասնել հենց այս տիպի օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը:

Անհրաժեշտ պայմանների գերակա տարրերի շարքում են ներդրողներին տրամադրվող հարկային արտոնությունները: Առկա հարկային մեխանիզմը այնքան էլ գրավիչ չէ վերաճական հատվածում ներդրումներ կատարելու համար, որտեղ ներդրման պահանջվող ծավալը համեմատաբար մեծ է, իսկ նախքան առևտրային արտադրությունն ու վաճառքն ընկած գարզացման ժամանակահատվածը՝ բավական երկար (հարկային համակարգը մեկնարանվում է 5.3.2 (2)-ում):

2) Համակարգել Կառավարության ստորաբաժանումների և տարբեր պետական գործակալությունների գործունեությունը

Այսօր է լավ հորիզոնական համակարգում ապահովել ամեն մի նախարարության և պետական գործակալությունների միջև: Կառավարության յուրաքանչյուր աշխատակից պետք է կիսի բնդիանուր ընդունումը երկրի գորգացման գործում օտարերկրյա ներդրումների ունեցած էական դերի մասին: Առաջ նման կոնսենսուսի օտարերկրյա ներդրումների համար անհրաժեշտ ընթացակարգերը կարող են դասեսլ աշխատանքը և տեսական: ԶՀԳ-ն օտարերկրյա ներդրումներին բացատրել է, որ հետագոր է իմանել ձևանարկություն, բացել բանկային հաշիվ և ծեռուղի բույսություն: Սակայն, որքան հասկանում ենք, որ այս համար պահանջվում է ծախսել մեկ ամիս կամ նույնիսկ ավելի: Պարզ չի, թե ո՞րն է նման հապաղման պատճառը: Գործընթացի երկարածզումը օտարերկրյա ներդրութի մուտ այն տարափորությունն է ստեղծում, որ կառավարական տվյալ կազմակերպությունն անգործառու է կամ էլ գործառու է, բայց կազմակերպությունում կամ անարդյունավետ կամ սենյարակ աշխատողներ: Օտարերկրյա ներդրումներն ու գործարարներն իրենց փորձից գիտեն, որ այն շուկաներում, որ գործարար միջավայրն անարդյունավետ է կամ չկա բավարար բարեկանցիկություն, անարդյունավետորյան պատճառով աճում են բիզնեսով գրադարձու տևասանելի և ոչ տևասանելի անուղղակի ծախընթաց, և ներդրումները չեն կարող շահութաբեր լինել, ուստի և նման շուկան գրավիչ չեն համարում ներդրումների համար:

Չինաստանում գոյություն ունեն երկրի նախանգների կողմից ստեղծված տեխնիկական գորգացման 36 գոտիներ, որ համատեղ ձևանարկություն հիմնելու կամ ներդրում կատարելու գործարքի ձևակերպումը կարող սկսվել և տվարտվել մեկ օրում և մեկ շներում: Կան մասնագետներ և բարգմանիներ, որոնք կոչված են պատասխանելու ներդրումներին հոգով բազմաթիվ հարցերին՝ կապված օրենքների, հարկերի, ֆինանսների, շինարարության, բժշկական սպասարկման, կոռունակ ծառայությունների սակագների և այլնի հետ: Նրանք ամեն կարգի անվճար խորհրդատվություն ներդրումներին:

Պարզեցված ընթացակարգի տակմանումը կկանխի բյորուկատական բաշխուկը և կաշառասունությունը:

3) Բարձրաստիճան կառավարական պաշտոնյաների դերը

Բարձրաստիճան կառավարական սպառումները միշտ պետք է լինեն երկրի լավ գորվագրուներ: Ուր էլ որ նրանք մեկնեն, պաշտոնապես թե նույնիսկ մասնավոր այցով, նրանք պարտաք ունեն խրանել Հայաստանը որպես մի երկիր, որտեղ օտարերկրյա ընկերությունները կարող են շահավետ ներդրումներ կատարել: Այս նպատակով նշված մարդկանց տեղյակ պետք է դարձնել օտարերկրյա ներդրումների համար առկա գործարար միջավայրի մասին:

Երբեմն նրանց հարկ կլինի ակտիվ ծեռվ ներդրության հնարավոր ներդրումների աղքատը համարվող երկրներ ներդրումային առարկություններ կազմակերպելու պատաժիանառու գործին: Տվյալ նպատակին կարելի է ծառայեցնել այդ երկրների հաճակարգերն ու բյուջեն:

4) Զարգացած երկրների համակարգերի և քյուչեի օգտագործումը

Գոյուրյուն ունեն որոշ զարգացած երկրների կողմից լինձնոված հնարավորություններ, օրինակ՝ սեփական համակարգերը, որոնք կարող են անհիջական օգտագործման մեջ դրվել՝ բավարելու համար Հայաստանում օտարերկրյա ներդրումների խրանման կարիքները:

Նապահիայի պարագային, Հայաստանի կառավարության խնդրանքով JICA-ն կարող է որոշակի ժամանակահատվածով ԶՀԳ գործույնել օտարերկրյա ներդրումների կամ արտաքին առևտրի փորձագետների: Բացի այդ, հնարավոր է դիմել JETRO-ին՝ խնդրելով նապահիայում կազմակերպել օտարերկրյա ներդրումներին նվիրված սեմինար: JETRO-ն կարող է կազմակերպել նաև նապահիայից հնարավոր ներդրումների փաստահավաք առաքելություն:

5) Զբոսաշրջության խրանումը՝ «Այցելե՛ք Հայաստան»

Հայաստանն Ասիայի (ներառյալ ճապոնիան) առավել քիչ հայտնի երկրներից մեկն է: Երկրը պետք է ավելի շատ քացվի միջազգային հանրության առջև: ճանապարհներից մեկը՝ դա օտարերկրյա գրոսաշրջիկների ստվար խմբերին երկիր հրավիրելն է: Նրանք սեփական աշբերով կտեսնեն Հայաստանի ներդրումային հնարավորությունները: 2001թ. գրոսաշրջային քարոզարշավի լավ առիթ է (Քրիստոնեության 1700-ամյակը): Այդ արշավը (ասենք՝ «Այցելե՛ք Հայաստան» կարգախոսություն) պետք է սկսել հիմա՝ 1999թ.: Հայաստանում առկա են գրոսաշրջության զարգացման բավարար ռեսուրսներ՝ ինչ եկեղեցիներ, լեռներ, լճեր, գինի, կրնյակ, մրգեր և հյուրասիրություն:

6) Սփյուռքի միջազգային ցանցը

Զեավորվում է ԱՄՆ-ի և Նվիրության Սփյուռքի աջակցության ուժեղ ցանց: Այս ցանցը պետք է շատ օգտակար լինի, և կարելի է ակնկալել համարյա թե անվճար ծառայությունների մատուցում: Հաշվի առնելով այն իրավիճակը, որ ԶՀԳ-ը չունի ոչ մի արտասահմանյան գրասննյակ, իսկ հայկական դեսպանատների բիզն աշխարհում խիստ սահմանափակ է, տվյալ ցանցը կարելոր նշանակություն է ստանում: Հայկական կառավարությանը հարկ է սատար կանգնել Սփյուռքի ներկայացուցիչների գործունեությանը՝ առաքելով խրանման հետ կապված տարրեր տեղեկություններ ու նյութեր, և քաջակերել նրանց ակտիվությունը՝ հանրային ճանաչում ապահովելով ինչպես նրանց բնակության երկրներում, այնպես էլ հայրենիքում՝ Հայաստանում: Հակառակ դեպքում այդ մարդկանց խանդակառությունը

գնալով կլսամբի: Բացի այդ, Հայաստանի կառավարությունը պետք է խորհի ապագայում նրանց գործունեությունն ընդլայնելու նպատակով որոշ բյուջեային միջոցներ հատկացնելու մասին:

5.3.2. Կառուցվածքային հենքի բարելավումը և օգտագործումը

(1) Իրավական համակարգը և դատական միջավայրը

Քանի որ 1998թ. Խոլիսին ընդունված Քաղաքացիական օրենսգիրը մեր այցելության ժամանակ դեռևս չուներ որևէ անզերեն բարգմանված տարրերակ, ուստի մենք չկարողացանք գնահատել դրա հնարավոր ներգործությունը գործարարության վրա: Ստորև բերվող մեկնաբանությունները հիմնված են հետազոտական թիմի այցելած ձևնարկությունների կառավարիչներից 1998թ. ընթացքում բաղադրական կողմնակի տեղեկությունների և Հայաստանի ներդրումային միջավայրի գնահատելու նպատակով IRIS-ի կատարած վերլուծության արդյունքների վրա:

Օտարերկրյա հնարավոր ներդրությունների առաջին տպափորությունն այն է, որ դժվար է հայրայթել սկզբնական՝ ելակետային տեղեկություններ: Նրանք ցանկանում են սպազորոշ իմանալ իրենց անձնական իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ներդրումներն ու սեփականությունը սպաշտանելու իրենց իրավունքը: Նրանք ուզում են վստահ լինել, որ վեճի կամ օրինազանցման պարագային ծագող հիմնահարցներ կարող են ստանալ իրենց գոհացուցիչ լուծումը:

Ձեռք բերված տեղեկությունների հիման վրա, ստորև անկոփ կնքվով և ներդրողի կողմից տրվող գերակայության կարգով բվարկվում ու շարադրվում են հետազոտական թիմի նկատառություններն առկա հիմնահարցների վերաբերյալ:

1) Պաշտպանությունն ընդեմ մենաշնորհների և ազատ մրցակցության երաշխավորումը

Չկա օրենք մենաշնորհների մասին: Քիչ են սպառողների պաշտպանության օրենքները: «Զեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքում մի հոդում կա «անազնիվ» մրցակցության պարագային պետության միջամտության վերաբերյալ: Սակայն, առկա չէ «անազնիվ մրցակցության» որեիցե սահմանում, ուստի և նշված կետի կիրառումը հարցականի տակ է: Ազատ մրցակցությունը պետք է երաշխավորվի ոչ միայն «անազնիվ մրցակցության» պարզորոշ օրենսդրական սահմանման, այլև իրականացման հստակ մեխանիզմների ներդրման միջոցով:

2) Մտավոր սեփականությունը

Նոր Քաղաքացիական օրենսգիրը սկսած նաև է մտավոր սեփականությանը նվիրված բաժին, բայց մենք չենք տեսնել անզերեն բարգմանությունը: Սեր ուսումնասիրության ընթացքում մի քանի անգամ շնչառվել է մտավոր սեփականությանը վերաբերող օրենքների բացակայությունը: Հայաստանի և ԱՄՆ-ի միջև 1992թ. կնքած երկխորհմանի պայմանագրերով երկու կողմերը համաձայնության են հանգել մտավոր սեփականությունը պաշտպանելու անհրաժեշտության մասին: Այս հարցը կարենք նշանակություն ունի գործարար մարդկանց համար. առ հատկապես վերաբերում է նրանց, ովքեր բանեցնում են գերարդիսկան տեխնոլոգիաներ: Նրանք ուզում են գտահ լինել, որ իրենց ակտիվները հուսալիորեն պաշտպանված են:

3) Սնանկացումը և պարտքերի փոխհատուցումը

Սնանկության մասին 1997թ. ընդունված օրենքը բերի է: Քաղաքացիական օրենսգրքում բաժին կա իրավաբանական անձի սնանկացման մասին, սակայն մենք չենք տեսնել անզերեն բարգմանությունը: Այս գրանցումը ներազդում է շնարված պարտքերը փոխհատուցելու իրավունքի վրա: Զեռնարկությունները պետք է աշխատեն կիրառելի գործարքների հիման վրա, և պարտքերի փոխհատուցումը՝ դա կարևորագույն գործոն է: Քանի դեռ չի հաստատվել գործարքների ու պայմանագրերի բաց և գործադրելի համակարգ, դժվար կլինի կողմերի միջև ծեավորել «փոխադարձ փառահություն»՝ մատակարարման վարկ կամ բանկային ֆինանսավորում տրամադրելու համար:

4) Վեճերի կարգավորումը

Վեճերն արագ և արդար կարգավորելու նպատակով գործարար մարդկանց պահանջվում է մասնավոր իրավաբարության համակարգ: Հունվարին միջնորդ դատարաններին և միջնորդությանը վերաբերող օրենքով հիմնվեց նման համակարգ: Հոյս կա, որ սա բոյլ կտու օրենքի ոգուն հաճապատասխան ասխահովել վեճների արագ կարգավորումը: Նշվում է, որ բացակայում են իրականացման շատ ընթացակարգեր, և մենք չենք կարող ասել՝ արդյո՞ք այս բարելավումները գործնականություն կարդարացնեն եղած սպասելիքները:

Ողջ դատական համակարգը 1998թ. հունվարին ներարկվել է վերանայման, նորատակ ունենալով ստեղծել ավելի արագ գործող մի համակարգ: Ընդամեն, գործընթացն իրականացման փուլում է և համակարգի ներգործությունը զնահատելու համար պահանջվում է որոշակի ժամանակ:

5) Բիզնեսի սկսումը

Շոլոր ձեռնարկությունները պետք է գրանցվեն, և օրենքն ասում է, որ դա հարկ է կատարել

30 օրվա ընթացքում: Գանգստեներ կամ, որ զբանցող մարմինները պահանջում են դիմումի փառերով նախատեսվածից ավելի փաստարձրենք, ինչը հետաձգում է գործընթացը և ընձնուուն կաշառակերպության հնարավորություններ:

Չսու Կառավարության որոշումների, ձևոնարկատիրական գործութեառյան որոշ սահմանված տեսակներով զբաղվելու համար պահանջվում է արտոնագիր: Տարբեր նախարարություններ ունեն տարրեր մոտեցումներ, և ընթացակարգերն այնքան կ հստակ չեն: Այս սեմնը պետք է ի մի բերել մեկ միասնական օրենքում, որն կ կսահմանի քորք պահանջները:

6) Հողի օգտագործումը

Իրավաբանական տնձինք և օտարերկրացիներն իրավունք չունեն լինել հողի սեփականատեր: Վարձակալության ժամկետն օտարերկրացիների համար սահմանափակված է 10 տարով: Եթե ընկերությունները սեփականաշնորհվում են, նրանց միաժամանակ տրվում էր հողի օգտագործման կարճամանկետ կամ երկարաժամկետ իրավունքը: Այս իրավիճակը պետք է սարգործվի: Անհրաժեշտ է սահմանել վարձակալության ավելի երկար ժամկետներ կամ հողի մի մասը ձեռք բերելու կանոնակարգված քայլեր: Բիզնեսի համար տարածքների օգտագործման իրավունքի և ծալսբերի առումով պետք է որոշակիություն լինի:

Սահմանափակ ժամանակահատվածում ընդունվել են շատ օրենքներ: Օրենսդրությունը հաճախ հակասական ու ոչ պարզ բնույր է կրում և չի սպահովում իրականացնան մեխանիզմներ: Քաղաքացիական նոր օրենսգրքում պետք է ներ առվեն որոշ հողվածներ, որոնք բույլ կտային ներդաշնակ հարաբերակցության մեջ լինեն մինչ այդ ուժի մեջ մտած այլ օրենքների հետ: Դատաիրավական միջավայրը, օրենքների պարզություն սահմանմամբ և դրանց գործադրելիությամբ, պետք է աջակցի ձևոնարկությունների արդյունավետ գործութեառյանը:

(2) Հարկային խթանները

1) Ընդհանրագիրը

Հարկային խթաններն արդյունաբերական գարզացմանը սատարող կարելոր միջոց են: Փոխադրումների ոլորտում եղած սահմանափակությունների պայմաններում իր նպատակներին՝ օրինակ, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը՝ հասնելու համար Հայաստանուն անհրաժեշտ է կիրառել հզոր և խիստ զրավիչ հարկային խթաններ: Ինչպես ցույց է տրվել բաժին 2.2.3.(2)-ում, շահութահարկից մոտքերը կազմում են ընդհանուր պետական նկամութեանի 10 %-ից ել սրակաս մասը: Հետեւաքար, եթե շահութահարկի գծով մտցվեն

ծանրակշիռ արտոնություններ, ապա դա չի բերի հարկային մուտքերի կտրուկ անկմանը: Ավելի ճիշտ կլինի սկզբանեւ, որ շահութահարկից մուտքերն աճնե՞լ ի շնորհիվ ներդրումների ընդլայնման, ստվերային տնտեսության կրծատման և տնտեսության վրա այլ ընդգրկոն ներգրածության: Ներդրումների աճին համամասնորեն կավերանան նուև ԱԱՀ-ից և Ակամտահարկից մուտքերը:

Արդյունարերական քաղաքականությանը ներդաշնակ պետք է սահմանվեն հստակ գերակայություններ և սակա հզոր խրաններ մշակվեն ու կիրառվեն այն սահմանափակ ոլորտներում, որոնք, արդյունարերական քաղաքականության տեսակետից, կարող են ասպահովել բարձր արդյունքներ: Հայաստանի արդյունարերական քաղաքականության գերակայություններին համապատասխան, քննարկման և բարակա հնարավոր հարկային խրանները հնաւելի են.

- օտարերկրյա ներդրումների հարկային խրաններ.
- ներդրումների հարկային խրաններ.
- արտահանման հարկային խրաններ.
- տեխնոլոգիայի կատարելագործման հարկային խրաններ:

Կարենոր է առաջ մղել ինչպես արտահանական, այնպես էլ ներմուծմանը փոխարինող ճյուղերը: Տեխնիկապես դժվար է գերակայություն տալ ներմուծմանը փոխարինող ճյուղերին՝ որպես մի ընդհանրության: Կարծում ենք, նախապատվորյունը պետք է սրվի ներմուծմանը փոխարինող այն արտադրատեսակներին, որոնց գծով Կառավարությունը կսահմանի օտարերկրյա ներդրումների և քննիանքապես ներդրումների հարկային խրաններ:

Հարկային խրանները քննարկելիս պետք է ընդունել, որ «Փոխգիծման կապ» գոյություն ունի արդարության կամ քափանցիկության և արդյունարերական քաղաքականության առումով դրանց ազդեցության միջև: Ինչպես մենք կնշարագրենք ավելի ուշ, Հայաստանը հարկային խրաններ է կիրառում 500 միլիոն դրամը գերազանցող օտարերկրյա բոլոր ներդրումների նկատմամբ՝ անկախ գործունեության ոլորտից: Սա լստ երևոյթին շատ լավ է արդարության կամ քափանցիկության տեսակետից: Սակայն, արդյունքում այն բարենպատստ ուժիմ է ստեղծում Հայաստանի գարգացման տեսածիրից թիվ կարենոր ներդրումների համար: Երկրին առավել անհրաժեշտ վերամշակող ճյուղերի առումով, որոնց մինչև շահութաբեր դատմալը երկար ժամանակ է պահանջվում, սա փաստորեն անհմատ խրան է:

Կառավարության քաղաքականությունը հարկ է բեկուկ ո՞չ թե արտարուստ հավասարության, այլ հայկական տնտեսության կենսունակության և կայուն զարգացման գործնական ապահովման վրա: Ելնելով Հայաստանի տնտեսության ներկա վիճակից և ներդրումների (հատկապես՝ օտարերկրյա) կարևորությունից, հարկային խրանները պետք է

բնարկեն մի բանի որոշակի չափանիշները մեկ համակարգի մեջ միակցելու տեսանկյունով:

Չափանիշներից մեկը՝ դա ներդրումների ծավալն է: Այս առումով օտարերկրյա ներդրումների համար այստեղ սահմանված 500 միլիոն դրամի չափանիշն արդյունքում բացառում է փորրածավալ օտարերկրյա ներդրումները: Մյուս կրոմից, ի նկատի չի առնվում մեծածավալ ներդրումների ներգրավման խնդիրը: Օրինակ, դասակարգութը 1) 200 հազարից-ից մինչև 1 միլիոն ԱՄՆ դրամի, 2) 1-ից մինչև 10 միլիոն ԱՄՆ դրամի և 3) ավելի քան 10 միլիոն ԱՄՆ դրամի կարող է բերել տարրեր տիպի օտարերկրյա ներդրողների ներգրավմանը:

Մեկ այլ կարևոր չափանիշ է դասակարգումն ըստ Հայաստանի տնտեսության գորգացման ուղղությունից և սրբազնաբերական բաղադրականության նպատակներից բխող առաջնայնության: Վերջինս սահմանելու համար հարկ է քննության առնել զանազան գործուներ: Հայաստանի դեպքում առավել կարևոր գործուներ պետք է համարվեն 1) ավելացված արժեքի մեծությունը, 2) տեխնոլոգիայի արդիականությունը և 3) արտահանման ավելացումը (արտաքին ներկույքի ապահովում կամ արտահոսքի կասեցում): Անհարկի բարդացումներից խոսափելու նպատակով բավարար կիֆի այս երեք գործուները նշնչ որպես եռաստիճան համակարգի «Ա», «Բ» և «Գ» նակարդակներ:

Ներդրումները կամ ճեղնարկությունները ընտրում են չափանիշները:

Կարելի է լրացրացիչ կնքառվ քննարկել և ի նկատի առնել նաև աշխարհագրական շրջանը և աշխատողների քանակը: Ըստ Էուրյան, անհրաժեշտ է խորն ուսումնահրճան հիման վրա որոշել միասնական չափանիշը՝ համակցելով նշված երկու չափանիշները:

Վերոշարադրյալ պլանը նպատակ չունի խորականություն դնել օտարերկրյա և ներքին ներդրումների միջև: Այսուհանդերձ, օտարերկրյա ներդրումներին կարելի է տալ փոքր-ինչ ավելի մեծ գերակայություն, քանի որ դրանք երկիր են բերում այնքան պակասող արժութային միջոցները:

2) Պահանջվող հարկային խթանները

Ելնելով վերոհիշյալ գաղափարից, չորս տիպի հարկային խթանների վերաբերյալ մեր առաջարկությունը շարադրվում է ստորև:

ա) Օտարերկրյա ներդրումների հարկային խթանները

Քաղաքականության մեջ արդեն իսկ որդեգրվել է այն մոտեցումը, որ օտարերկրյա ներդրումների նկատմամբ պետք է կիրառել բարենպաստ ոնժիմ: Ինչպես նկարագրվել է բաժին 2.2.3.(2)-ում, 1998թ. հունվարից պայմանները փոխվել են և «հարկային արժակությը»

(2 տարով՝ ներդրման ժամկետից) կիրառվում է միայն 500 միլիոն դրամը գերազանցող օտարերկրյա ներդրումների նկատմամբ: Շարեհանորյան նակարդակը նվազել է, քանի որ նախկինում արտանորյանը կիրառելի էր օտարերկրյա ներդրումների ավելի փոքր ծավալների համեմայ:

Սա ըստ երևոյթին տեղի է ունեցել, նպատակ ունենալով խրանել առավել կարևոր ճյուղերում (օրինակ՝ վերամշակող արդյունաբերությունում) կատարված օտարերկրյա ներդրումները՝ ելեկով այն իրուրաքանչից, որ նախկինում արգած ներդրումները հիմնականում ուղղվել են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ռեստորաններն ու խանութները, որոնք չեն պահանջում մեծ ծավալի ներդրումներ: Մակայն, նման քաղաքականորյան նպատակին կարելի է առավել արդյունավետ հասնել երե խրաները կիրառվեն գործունեության որոշակի ոլորտի նկատմամբ: Օրինակ, հատկապես քարենալաւ խրաներ կարելի է տրամադրել նպատակային ճյուղերին՝ բիոտեխնոլոգիաների արտադրությանը, համակարգային ծրագրերի նշակմանը, արտահանմանը՝ կողմնորոշված արդյունաբերությանը և ներմուծմանը փոխարինող արտադրանութերին:

Վերամշակող արդյունաբերության պարագային, հարկումից նրկանյա ազատումը (և մինչև 8 տարի ժամկետով հարկի 50%-ով կրճատումը. 2002թ. հետո՝ 2 տարով) կարող է այնքան էլ հրապուրիչ շրվալ ներդրողներին, քանի որ արդյունաբերութները հաճախ վճարում են կրու ներդրման առաջին մի քանի տարիներին (ինկորապորտում): Այստեղ ներդրումներն առաջ մղելու նպատակով պահանջվում է, որ «հարկային արծակուրդը» սկսվի հարկվող շահույր ստանալու տարվանից, հարկային վճարի փոխանցումից հետո: Մնար առաջարկում ներ անցում անել հետևյալ համակարգին:

Աղյուսակ 5.3.2.1 «Հարկային արծակուրդի» տարբերակ - ՕՌՆ-ԵՐԻ խթան

Ներդրման ծավալի առաջնայնություն	0,2-1,0 մլն ԱՄՆ դր.	1,0-10,0 մլն ԱՄՆ դր.	10,0 մլն. ԱՄՆ դր. ավելի			
Շահույրարկ	0%	50%	0%	50%	0%	50%
Ա	3 տարի	4 տարի	5 տարի	5 տարի	5 տարի	7 տարի
Բ	3 տարի	3 տարի	4 տարի	4 տարի	5 տարի	6 տարի
Գ	3 տարի	2 տարի	4 տարի	3 տարի	5 տարի	5 տարի

«Հարկային արծակուրդի» սկիզբը՝ հարկվող շահույր ստանալու տարին, հարկային վճարի փոխանցումից հետո:

Ի լրումն, օտարերկրյա ձեռնարկությունների կողմից շարունակական վերաներդրումը խրանելու նպատակով, կարելի է բնարկման առնել այնպիսի հարկային խրանի կիրառումը, եթե ստացված շահույրից վերաներդրված կասմիտալից շահուրահարկի որոշակի մասը

(օրինակ՝ 40 %-ը) փոխհաստուցվում է տվյալ ծեռնարկությանը: Չինասամում և Վիետնամում հարկային խրանների նման համակարգ է զորվում:

Եթե կարեւորյուն տրվի գերժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն ու դրանց կայուն գարգացնումը, ապա կարելի է նման նպատակային ծեռնարկությունների հանդեպ կիրառել շահութահարկի դրույքաչափը 25%-ից 15 %-ի իջնեցնելու մոտեցումը:

Աղյուսակ 5.3.2.1-ում ներկայացվում մոտեցմամբ կարելի է առաջնորդվել նաև վերանշյալ բ)-ի և գ)-ի նկատմամբ:

բ) Ներդրումների հարկային խրանները

Նորաստեղծ ծեռնարկությունների հարկճան բարենպաստ կարգն անցյալում չարաշահվել է, երբ մեկը մյուսի հետևից նոր ծեռնարկություններ հիմնելով և բիզնեսն այս վերջիններին փոխանցելով հաջողում էին խույս տալ հարկություն: Պահանջվում է հարկային խրանները օգտագործել ոչ բն ծեռնարկությունների ստեղծումը, այլ, ավելի շուտ, դրանցում կատարվող կապիտալ ներդրումներն առաջ ներկու նպատակով: Արմենական նման ներդրումների որոշակի (օրինակ՝ 20%-ի) մասով հարկային գեղշ տրամադրելու մասին: Կարելի է նաև բարենպաստ ոնժմբ կիրարկն ո՛չ ը լնդիանրապես, այլ սոսկ նպատակային ճյուղերի առումով:

գ) Արտահանման հարկային խրանները

Հայաստանում ներկայում գոյուրյուն չունեն արտահանման հարկային խրաններ: Այստեղ նպատակոր պայմանների ստեղծումն էական նշանակություն ունի, քանի որ արտահանման ընդլայնումը Հայաստանի համար հույժ կարելոր խնդիր է հանդիսանում:

Մի տարրերակ կարող է լինել շահութահարկի կրճատումը (օրինակ՝ «50% չ արտահանման բանորդ» չափով) այն ծեռնարկությունների համար, որոնց իրացման մեջ բարձր է արտահանման տևասկարար կշիռը (առենք՝ 60%-ից ավելի է) ---«Ա» եղանակ:

Մնկ այլ մոտեցում է բարենպաստ հարկում կիրառել այն ծեռնարկությունների նկատմամբ, որոնք բնուրագրվում են գույտ արտահանման (արտահանումից հանած ներմուծումը) մեծ ծավալով, այլ ո՛չ ըեւ արտահանման բարձր բանորդով, որովհետև Հայաստանի կառավարությունն, բայ եռյան, պետք է նպատակոր պայմաններ ստեղծի նախ և առաջ հենց նման ծեռնարկությունների համար: Սակայն, այս տիպի արտոնության գործադրումը հղի է հարկումից խուսանավելու լորջ վտանգով, քանի որ առավել ոյորին է դրանո ընկերությունների միջոցով արհեստականորեն նվազեցնել ներմուծման ծավալը, քան ըեւ նույն կերպ բարձրացնել արտահանման ցուցանիշը: Այս կարգի չարաշահումներից զերծ մնալու համար հարկ կլինի մշակել որոշակի նեխանիզմ:

Օրինակ, կարելի է մտածել զուտ արտահանման աճի գումարի որոշակի (նիցոր՝ 20%-ի) մասնվ հարկային զնոց հասկացնելու մասին --- «Բ» եղանակ:

Եթե համակցներ «Ա» և «Բ» եղանակները կամ, այլ խոսքերով, եթե արտոնության կիրարկման նպատակով հաշվի առնվի երկու եղանակներով հաշվարկված գումարներից փոքրը, ապա կարելի է ձևավրել զուտ արտահանման խոչըն ծավալ ունեցող ձեռնարկությունների բարենպատ հարկում ներառյալ և ընդամենք գույի չարաշահումները բացառող խակալես գործուն մի համակարգ:

Դ) Տեխնոլոգիայի կատարելագործման հարկային խթանները

Որպես տեխնոլոգիայի կառարելագործման հարկային խթաններ կարելի է նշել այն, եթե բայց է արվում կատարել տեխնոլոգիայի բարեկավման հետ կարգած ծախսերի (օրինակ՝ հետազոտումների և մշակումների կամ վերապատրաստման ծախսերի) կրկնակի հաճում հարկվող շահույրը հաշվարկելիս իրական ծախքը կրկնակի հանվում (1), և եթե, ելնելով այդ ծախսերի գումարի ավելացումից, հարկացվում են հարկային զնոցներ: Սակայն, նման արտոնությունները պարունակում են հարկումից խույս տալու որոշակի դիմք, բանի որ դրանց հաշվառման հաշվապահական համակարգը լավ չի մշակված: Հարկումից խուսափելու վտանգն ավելի փոքր է, եթե հենակետ է ընդունվում աճի գումարը, այլ ոչ քեզ որոշակի բազային մեծություն: Գիտահետազոտական աշխատանքների նշված հարկային խթանների համակարգն իր կիրառումն է գտնել աշխարհի տարրեր երկրներում:

3) Կառավարման տեղական մարմինների հարկային եկամուտների ապահովումը

Հայաստանում գոյություն չունեն հարկերի տեղական տարատեսակներ: Բայց և այնպես, որոշ հարկերից (օրինակ՝ գույքահարկից) ստուգվող մուտքերի մի մասը հասկացվում է կառավարման տեղական մարմիններին: Բաժին 5.2.4.-ում արծարծված տարածքային գարզացման բաղաքանականությանը հետամուտ լինելու նպատակով կարենք և հասնել վերջիններիս հարկային եկամուտների ծավալի մեծացմանը: Սակայն, տեղական հարկերի ներդնումը դժվար քեզ գործնական բայլ լինի, եթե նկատի առնենք հարկերի հափարման ածանցյալ խնդիրը: Առավել գործնական կլիմի ընդլայնել առկա համակարգը, եթե պետության հարկային մուտքերի մի մասը հասկացվում է կառավարման տեղական մարմիններին: Հարկային եկամուտների ներկա կառուցվածքի ներքո, առնենք, հնարավոր տարրերակ կլիմեր տեղական բյուջեներին փոխանցել ավելացված արժեքի հարկից մուտքերի մի մասը, որի կոնկրետ չափը կորոշվեր՝ ելնելով վարչական միավորի ազգային բվարանակից:

(3) Ֆինանսական հատվածի բարեփոխումը

1) Ընդհանուրագիրը

Հայաստանում ջտմքեր են գործ լրվում անրապես ֆինանսական հաստատությունները, և պետք է ասել, որ այսուղ արձանագրվել են մասնակի հաջողորդումներ, հատկապես ինչ վերաբերում է նման հաստատությունների կայուն ֆինանսական կացությանը: Այսուամենայնիվ, առկա ֆինանսական հաստատությունները բավարար չափով չեն կատարում ֆինանսական միջնորդության իրենց գործառույթը: Հայկական բանկերը չեն դրսերում փոխատվական գործունեությամբ գրաղվելու որևէ ձգտում: Նրանց եկամտի հիմնական աղյուրը են հանդիսանում ներդրումները պետական կարճաժամկետ պարտատոմսերում և դրամական տրանսֆերները:

Հայաստանի ֆինանսական հատվածում առկա հիմնահարցի եռթյունն այն է, որ դրամի ներքին շրջանառության մեխանիզմը չի գործում, երբ ավելցուկային միջոցները պետք է կրանքին բանկային խնայողությունների տեսքով և օգտագործվեին դրանց կարիքը զգացող հատվածներում:

Տվյալ հիմնահարցը կարելի է տրոհել երկու մասի՝ խնայողությունների պակասի և ավանդների պակասի: Ավանդների պակասն ընդիմանուր առմամբ ածանցվում է ֆինանսական հաստատությունների հանդեպ մարզկանց վստահության պակասից: Փոխատվության դեֆիցիտը պայմանավորված է այն փաստով, որ փոխատվություն տալլ բանկերի համար սրական գրավիչ է, քան ներդրումը բարձր տոկոսադրույթ ունեցող ՊԿՊ-երում, և որ վարկերի ստուգագննման կարողությունը բանկերում բույլ է գարգացած:

2) Ֆինանսական հաստատությունների գարգացման ուղեծիրը

Ֆինանսական հաստատությունների գարգացումն էական նշանակություն ունի Հայաստանի տնտեսության ներկայի և ավագայի համար: Հարկավոր է հիմնական գծնրով նախատեսել, թե ինչպիսին են լինելու Հայաստանի ֆինանսական հաստատությունները 2005 թվականին:

Ամենաուշը մինչև վերը նշված ժամկետը պետք է հասնել այն բանին, որ երկրի մի քանի բանկեր որոշակի վստահություն վայելեն միջազգային ֆինանսական շուկայում: Հայկական ոյլեիցն բանկի նկատմամբ վստահությունը պետք է բարձրացվի այնպիսի աստիճանի, որ, օրինակ, որևէ օգտառու կարողանա ընդունել այդ բանկի բողարկած 10 միլիոն ԱՄՆ դոլարի վարկագիրը, առանց ոլինելու օտարերկրյա որևէցն վստահելի բանկի հավաստմանը:

«Բանկ» անվան տակ գոյություն ունեն 35 փորր ֆինանսական հաստատություններ, որոնք մեծ մասամբ, ունենալով խիստ սակագ ավանդներ, ոչ մի ջանք չեն քափում միջոցներ

ներգրավելու գործում, և որոնք ասլավինուն ևն բարձր եկամտաքերուրյամբ պետական կարճաժամկետ պարտաստումներին և դրամական փոխանցումներից ստացվող միջնորդավճարներին:

Ծրջահայոց վերամայման սկզբը է ներարկել Հայաստանին շատ գրանիերից անհրաժեշտ լինելու հարցը: Արոշ բանկեր աննշան ավանդներ են ներգրավում և, ըստ Եռյան, ոչ բանկային ֆինանսական հաստատություններ են: Այլ բանկեր կ լիկ գրադադ են Ռուսաստանի հետ դրամական փոխանցումներով: Մեր կարծում ենք, որ բանկերը հարկ է ստորաբաժանել հետեւյալ երեք դասերին և բացալերել ֆինանսական հաստատությունների յուրաքանչյուր տեսակի գարգացումը:

- ա) Առաջնային բանկեր: Զբաղվում են ընդհանուր բանկային գործունեությամբ, այդ թվում ավանդների ներգրավմամբ, տարրեր ֆինանսական գործիքների հետ կապված գործառություններով, վճարումներով և մարտուններով, միջազգային առևտրային կարգավորումներով (Յերազյալ վարկագրերը), երաշխիքներով, ներյուումներով, վարկային բարտերի սպասարկմամբ (5-6 ճնան բանկեր երեխ բավական են Հայաստանին): Այս տիպի բանկերին անհրաժեշտ է մոտ 100 անգամ ավելացնել իրենց կապիտալը, որպեսզի կարողանան սատարել ոխների ստանձնումը և հեղինակություն ձեռք բերեն համաշխարհային ֆինանսական շուկայում: Առաջարկում ենք տարեց տարի մեծացնել պահանջվող կապիտալի չափը, օրինակ՝ որպես առաջին նպատակ սահմանելով, որ այն սկզբը է մինչև 2005թ. աճի մոտ 20 անգամ:
- բ) Երկրորդային բանկեր: Բանկեր, որոնք չեն կարող բավարարել կապիտալի վերը նշված պահանջներին: Նրանք գրադադար են սահմանափակ բանկային գործունեությամբ: Օրինակ, նրանք իրավասու չեն գրադադար միջազգային առևտրի հետ կապված ֆինանսական կարգավորումներով:
- գ) Ոչ բանկեր: Այլ ֆինանսական հաստատություններ, որոնք իրավունք չունեն ներգրավելու ավանդներ:

Վերսիչյալ չափանշումը տուկ կրպիտ օրինակ է: Բայց մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է որոշակի արմատական բարեփոխում, որպեսզի անրապնդվի բանկերի կապիտալը → ձեռք բերվի արտասահմանի վստահությունը և բանկերից օգտվողների հավատը → սպելանան ավանդները և, արդյունքում, → ձևավորվի ներդրումների ու ֆինանսների աղբյուր:

3) Ավանդների ապահովագրման համակարգի ստեղծումը

Անհյամեշտ է քննարկել ավանդների ապահովագրման համակարգի ստեղծման գործափարզը, որը պետք է նախատեսվառողբած լինի փոխել այն իրավիճակը, երբ մարդիկ իրենց դրսնը գերազատում են սրանել ոչ թե բանկերում, այլ տանը: Համակարգը կոչված կլինի պաշտպանել մեկ անձի հաշվով մինչև մի քանի հազար ԱՄՆ դրարի ավանդները և միջոցներ հավաքագրել ի հաշիվ բանկերի վճարած ապահովագնի: Փոփոխական՝ կապիտալի բանորույի վրա հիմնված ապահովագրական դրույթաշափերը, և կամ և կապիտալի որոշակի գումարը կարող են բազալերել բանկերին ամրապնդելու իրենց սեփական կապիտալի կառուցվածքը:

4) Ֆոնդային բորսաների միավորումը և կամ միաձուլումը

Հայաստանում կան չորս ֆոնդային բորսաներ: Նույնիսկ դրանցից խոշորագույնը՝ Երևանի ֆոնդային բորսան աշքի չի ընկնում առևտրի մեծ ծավալով և, դատելով շրջանառվող միջոցներից, բավ չի գործում: Արժեքրդերի ոչ ակտիվ առևտրի պատճառները հիմնականում ածանցվում են արժեքրդերի մասին մայոլկանց ունեցած հասկացորյան և դրանց նկատմամբ վատահորյան ցածր մակարդակից: Գործնական չէ արժեքրդերի շուկայում ֆինանսական գործառույթ փնտրել ձեռնարկությունների համար: Ավելի բարձր գերակայություն ունի բանկերի կողմից ստուբլակի ֆինանսավորման ուժնեղացումը:

Թեսչետև ֆոնդային բորսաները մասնավոր հատվածի գարգացման տևակետից անհրաժեշտ ենքակառուցվածք են, չկա ոչ մի անհրաժեշտություն, որ Հայաստանում գուգահեռաբար գործն չը բոնդային բորսաներ, հաշվի առնելով հայկական տնտեսության ծավալը: Հարկ է քննարկման առնել այդ ֆոնդային բորսաների միաձուլման կամ միավորման հնարավորությունը:

5) Ոչ բանկային ֆինանսական հաստատությունների գարգացումը

Հայաստանի ոչ բանկային ֆինանսական հաստատությունների հատվածը, որ ներառում է բանկերից բացի այլ նման հաստատությունները, այսինքն՝ ֆինանսական ապրանքների հետ գործ ունեցող ոչ բանկային հաստատությունները՝ արժեքրդային ընկերությունները, դժբախտ պատահարից ապահովագրման ընկերությունները, կյանքի ապահովագրման ընկերությունները, վարձակալության ընկերությունները և ներդրումային / դրամային խնամառությունները, բույլ գարգացում և առքել: Գոյություն ունեն դժբախտ պատահարից, կյանքի և դժվական ապահովագրմամբ գրադադար մոտ 20 ընկերություններ, սակայն դրանց գործունեության մաշտարը փոքր է, իսկ միջոցների հավաքագրման ծավալը շատ հեռու է այն բանից, որսխազի հնարավոր լինի արդյունավետ ներհոսք ապահովել տնտեսության մեջ:

Միակ հիմնական գործոնը՝ դա նման հաստատությունների նկատմամբ վատահության պահանձն է: Մարդկանց մեծ մասը կարծում է, որ եթե նույնիսկ արակովագրման պայմանագիր է կնքվել, միևնույն է հարկ եղած դեպքում այն չի կատարվեր:

Ոչ բանկային հատվածի քերի գարզացումն այն գործոններից մեկն է, որոնցով պայմանագործած է բանկերի կողմից գանձվող տուկոսադրույթերի բարձր մակարդակը: Կառավարությունը սկսում է քայլել ճեղք ստոի իրանելու ոչ բանկային ֆինանսական հաստատությունների գարզացումը:

(4) Հաշվապահությունը և առողջիութը

1) Նոր հաշվապահական համակարգի ներդնումը

Հաշվապահության բարեփոխումը ներկայումս գտնվում է առաջընթացի փուլում: Ընդ որում ոչշաղրացունը բևեռվում է արտաքին հաշվետվության համար նոր կառուցվածքային համակարգերի ճեղքորման վրա, ինչպիսիք են նոր հաշվապահական ստանդարտների ներդրումը և հաշվապահության նոր օրենքների վավերացումը: Այնուհետև, կարևոր խնդիրներ կիմնեն ճեղքարկություններում նոր ստանդարտների կիրառումը և կառավարման հաշվապահության հայեցակարգերի ներդնումը հետապորինս շատ ճեղքարկություններում, ինչը բույլ կտու համել կառավարման բարելավմանը:

Հաշվապահների հմտացումը էական նշանակություն ունի հաշվապահության և առողջական համակարգերի գարզացման համար, և այս նպատակով անհրաժեշտ է տպակութեալ գործնական վերապատրաստում անցնելու հետապորտությունները: Հաշվապահական համակարգի փոխարկումը նաև նման հետապորտություն կընձեռի նոր հաշվապահներին:

Նոր ստանդարտների ներդրման ճանապարհներից մեկը՝ դա լրաց պարտադիր կիրառումն է շատ ճեղքարկություններում: Սակայն, նման հարկադրական եղանակը կարող է թերել հաշվապահական համակարգի մակերեսային՝ առերևոյք փոխարկմանը, ինչը նշանակում է, որ գործառնական մակարդակով ճեղքարկություններում կշարունակեն պահպանվել հետառ նդանակներն ու նոտեցումները: Ի արդյունք, բավարար չափով չեն օգտագործվի հաշվապահության նոր համակարգի առավելությունները: Հայտանումն պարտադիր կիրառումը սահմանափակվում է կարգավորվող գործունեության որոշ ոլորտներով (բանկեր, ենթակառուցվածքներ), իսկ ընդհանրապես այն կրում է կամսվող քննություն: Նման կամագոր փոխարկումը վերը բերված տնտեսակյունից կարելի է համարել ընդունելի: Այուս կողմից, սա կարող է տանել փոխարկման ծգծզմանը և խոչընդոտել մասնավոր հատվածի գարզացումը: Կառավարիչները կարող են ըմբռննն հաշվապահության փոխարկման օգուտուները և մեծ առաջնություն շտան այդ գործընթացին, բանի որ հայկական

Ճենարկություններն ունեն մի շաբթ առկախ խնդիրներ: Անհրաժեշտ է կառավարիչներին պարզաբանել գործող համակարգի փոխարկման օգուտները և հասնել նոր համակարգի հաստատում ներդրմանը, սկսած դրանից մեծ շահ ունեցող ճենարկություններից:

Մեծ շահ ունեցող ճենարկությունների օրինակ կարող են լինել այնպիսիք, որոնք աչքի տաաջ ունեն օտարերկրյա գործընկեր կամ բանկային վարկ ձեռք բերելու խնդիրը: Օտարերկրյա ներդրողները կամ բանկերը նովորարար պահանջում են ֆինանսական հաշվետվորյունները կամ գործարար պլանը: Սա կարող է հանդիսանալ փոխարկման, ներառյակ կառավարման հաշվապահության ներդրման դրապատճառ: Ակնկալվում է, որ օտարերկրյա ներդրումների արդյունքում ճենարկություններում նոր ստանդարտների կիրառումը առաջընթաց կապի:

Մյուս կողմից, հայկական բանկերն ակտիվ չեն փոխատվության գործում. հետեարար, վերջինս չի կարող հանդիս զալ որպես հաշվապահության նոր երանակների ներդրման շարժիչ ուժ: Այսուհանդերձ, Ըրբորյանի հիմնադրամը և Համաշխարհային բանկի երկաստիճան վարկային ծրագիրը կարող են ընձեռն հաշվապահության և կառավարման հաշվապահության նոր համակարգի գործադրման լավ հնարավորություն:

Այս ծրագրերի ներք վարկերի տրամադրման համար պահանջվում է մանրամասն գործարար պլան: Կառավարիչները կարող են, ինչպես պահանջվում է, նախապես պատրաստել այդպիսի մի պլան: Մակայն, սա նրանց համար լավ առիթ կծառայի հասկանալու, որ պատշաճ հաշվապահական տեղեկությունները, բույլ տալով համադրել պլաններն ու իրականությունը, հանդիսանում են ճենարկատիրական գործունեության հիմքը:

2) Տեղում աջակցման միջոցով հաշվապահական ստանդարտների

փոխարկումը

Ճենարկությունների համար հաշվապահական համակարգի փոխարկումն ավելի արդյունավետ կլինի, եթե տեղում նրանց փորձագիտական աջակցություն ցույց տրվի և Խորհրդային, և միջազգային հաշվապահությանը ծանոթ խորհրդականների կողմից: Այս կարգի օժանդակությունը կարող է գործնական գիտելիքներ հաղորդել ճենարկությունների հաշվապահներին, ինչպես նաև սատարել տվյալ ճենարկության հաշվապահական համակարգի փոխարկման գործընթացին:

Կոնկրետ դեպքում, օրինակ, կարելի է փորձագիտական աջակցություն (ներառյակ կառավարման հաշվապահության ոլորտը) ցույց տալ այն ճենարկություններին, որոնք նպատակ ունեն դիմել 2-աստիճան վարկային ծրագրերով նախատեսվող ֆինանսական

օգտորյանը: Արժե խորին հաշվապահական համակարգի փոխակերպանը ներկայումս ԱՄՆ-ի Միջազգային գարզացման գործակալության ցուցաբերած փորձագիտական աջակցության օգտագործման և վերջինս երկառադիման փարկույին ծրագրերում ներառելու նորատականարմարության նստին:

3) Կառավարման հաշվապահության կարևորությունը

Կառավարման հաշվապահությունը, որ կիրառվում է վճիռներ կայացնելիս, էական դեր ունի մասնավոր հատվածի գարզացման և արտարին հաշվետվության համար նուսաղի հաշվապահական համակարգի աշխատվածան գործում: Չնայած կառավարման հաշվապահությունն ընդգրկում է ոչ միայն սեցյալ արդյունքները, այլև որիշ տվյալներ (օրինակ՝ առևտության գնահատումներն ու բյուջեն), այսուամենայնիվ, որու համար իինք կարող են ծառայել հաշվապահական պատշաճ վաստակի գրառումները: Ուստի, եթե անցում է կատարվում նոր հաշվապահական համակարգին, հարկ է ի նկատի առնել ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարման հաշվապահության սրահանջները: Այլոց պահանջվող տեղեկությունների գեկուցման առումով ֆինանսական հաշվապահության դերը պատիվ է: Մյուս կողմից, կառավարման հաշվապահությունն ակտիվ դերակատարություն ունի կառավարիչներին պետք եկող տեղեկությունների ձևոր քերման գործում: Կառավարման հաշվապահության վրա շեշտադրությունը բերևս բոլյ կտու կառավարիչներին առավել արդյունավետ կերպով համոզել հաշվապահական համակարգի կարևորություն մեջ:

4) Հաշվապահների պատրաստումը/հմտացումը

Հաշվապահության և առողիտի համակարգերը միջազգային մակարդակին մերձնեցնելու նպատակով կասիանցվի բարեկավել համակարգերի գործառությունը և կառարելագործել կառուցվածքային հենքը, օրինակ՝ առեղծել ԻԱՏ-ների վրա հիմնված նոր հաշվապահական համակարգեր: Հատկապես կարևոր է պատրաստել ու վերապատրաստել հնարավորինս շատ հաշվապահների, իսկ կառավարիչներին ըմբռնելի դարձնել հաշվապահության նոր փիլիսոփայությունը: Խնչպես նկարագրված է բարձին 2.2.3.(4)-ում, արդյուն սկսվել են ACCA-ի Երդվալ հավատագրված հաշվապահների ասոցիացիայի կազմակերպած վերապատրաստման դասընթացները: Սակայն, կառավարման հաշվապահության բն ֆինանսական հաշվապահության մեջ մասնագիտացած հաշվապահների հմտացման գործում էական նշանակություն ունեն գործնական պարապմունքներն ու վործառությունը, ինչպես նաև արտադրությունից կտրված ուսուցումը: Օտարերկրյա ներդրումները բերում են նոր հաշվապահական նդանակեների ներդրմանը և վերը նշված հաշվապահական դասընթացներն անցած մասնագետներին հնարավորություն են ընձեռում ձևոր բերել

գործնական փորձ ու հմտություններ: Դրանք նաև օգնում են կառավարիչներին հասկամուլ նոր հաշվապահության օգուտները:

5) Առողջապահության պատրաստումը/հմտացումը

Սկսվել է նաև ֆինանսական հաշվետվորյունների առողջապահությունը: Գործնական փորձառությունը նույնական անհրաժեշտ ու կարևոր է առողջապահությունից, որքան և հաշվապահության համար: Առողջապահության փորձ կարելի է ձեռք բերել միայն այն երկրների առողջապահության ֆիրմաներում, որոնց առողջապահության համակարգը դեռ բավականաշատ չի զարգացած: Ներկայում Հայաստանում կան սուսկ մի բանի միջազգային ընկերությունների գրասենյակներ: Օտարերկրյա ներյուրունների ընդլայնումը բերելու և օտարերկրյա ծեռարկությունների ֆինանսական առողջապահությունի պահանջարկի մեծացմանը, ինչն իր հերթին տանելու է արտասահմանյան ֆիրմաների գրասենյակների և աշխատողների բվի ավելացմանը: Նման ֆիրմաներում փորձառություն ձեռք բերած հայ հաշվապահության ստացածար դեր կարող են խաղալ Հայաստանում առողջապահության համակարգի զարգացման գործում:

6) Հաշվապահության կազմակերպության ամրապնդումը

Առողջապահության մարմնի՝ որպես ինքնակարգավորվող գործակալության գոյությունը: Հաշվապահության երեք ասոցիացիաների սկզբանակիրառ միաձուլումը հավանաբար բնորդ տվյալ գործառույթի սահմանադրամանը: Օրինակ, սպահանջվում է հետևյալ գործառույթների իրականացումը: Հաշվապահության և առողջապահության սահմանում, գործնական ուղեցույցի կազմում ու վերանայում, երիկական կողմերի բարելավում և կրթման ու վերապատրաստման սահմանում: Արժե ըննության առնել Հաշվապահությունի միջազգային ֆեդերացիայից (IFAC) հաշվապահության մարմինների միջազգային կազմակերպությունից և IFAC-ի եվրոպական տարածքային կազմակերպությունից՝ FEE-ից աջակցություն ստանալու հնարավորությունը:

(5) Տեխնոլոգիայի զարգացումը և որակի բարելավումը

1) Տեխնոլոգիայի զարգացումը

Զերծարկություններին պահանջվում է, որպեսզի Կառավարությունը միաժամանակյա աջակցություն ցոյց տա տեխնոլոգիայի զարգացման հետևյալ 2 առումներով:

ա) Տեխնոլոգիայի կատարելագործում – ծերությունների տեխնոլոգիական

մակարդակի բարձրացում: Առ նշանակում է, որ ձեռնարկություններին օգնություն պետք է գույց տրվի տեխնոլոգիայի առանուկ նիշազգայնորեն նրգունակ դաւնակու հարցում, լուծելով վերջին 10 տարվա լճացման հետևանքով իրավիճակից ևս մնալու և սարքավորման հնացման խնդիրը:

- բ) **Տեխնոլոգիայի նորացում (նորամուծում)** – կառավարության կոմ պետական հաստատությունների կողմից հետազոտումների և մշակումների գործումներության նախաձեռնում: Այդ հաստատությունները պետք է ձեռք բերն նորագույն տեխնոլոգիաներ և գրադրված նոր տեխնոլոգիաների գյուտարարությամբ, իսկ ապա դրանք տրամադրեն ձեռնարկությունների օգտագործմանը:

Կոնկրետ առաջարկությունները.

ա) տեխնոլոգիայի կառարելագործման աջակցումը.

- Պետական ստուգաքննումնան հետազոտական լաբորատորիաներ	Ձևանարկության խնդրանքով՝ փորձագիտական աջակցում, արտադրանքի կառավարողականի և որակի ստուգաքննում
- Տեխնոլոգիական խորհրդատվական համակարգ	Արյունաբերության նվազագույն կորպորատիվ կամ համատակալվող որակության խորհրդաստումներ, որոնք նաև առաջնային գնահատման /աջակցման ծառայություններ/ մնարով խմբական ներկայացրած ձևանարկություններ
- Տեխնոլոգիաների / հմտությունների տուցման կենտրոն	Տեսության սերտման և հետարյանների բարեկաման նպատակով համայնամ տեխնոլոգիական կյանքամ ուղղված ուղղակի դաշտային

բ) Տեխնոլոգիայի նորացման/նորամուծման աջակցումը.

- Առաջավոր տեխնոլոգիայի լաբորատորիան	Պատասխանատու է առաջավոր տեխնոլոգիաների՝ նորը կենտրոնիկայի, մեխանարունիկայի և այլին հետազոտման ու մշակման համար, նպատակ ունենալով նոր բիզնեսի ստեղծումը Հայաստանում:
- Պատենտների խթանում և կառավարում	Պատենտային տեղեկությունների խրանումը և կառավարումը դա միջազգային բիզնեսի կարևորագույն խնդիրն է: Ձեռնարկությունների համար անհրաժեշտ է ունենալ պատենտներ ձեռք բերող, արդյունավետ պատենտի օգտագործումը խրանող և օտարերկրյա գործընկերների հետ հարաբերություններն ուղղորդող մի պետական հաստատություն:
- Տեխնոլոգիայի նորացման հիմնադրամ	Այս հիմնադրամի նպատակը կինի ֆինանսավես աշակեցել նոր արտադրանքի հետ կապված հետազոտական ու մշակողական աշխատանքներին: Բացի դրանից, ձեռնարկությունները կարիք ունեն նոր սարքավորումներում ներդրում անող մի հիմնադրամի, որը կօգնի նրանց սկսել նոր սպառների փաստացի արտադրությունը:

2) Որակի բարելավումը

Ընդհանրապես, արտադրանքի որակի բարելավումը պայմանավորված է տեխնոլոգիայի կատարելագործմամբ: Ուստի, արտադրանքի կատարողականի և հուսալիուրյան բարելավումը հարկ է ընդգրկել վերը նշված ննդարաժին 1)-ա)-ում: Այսուհետեւ, շատ դժվար է որակի ճշտութես պահել բայց մակարդակի վրա, որովհետև որակը կախված է ոչ միայն տեխնոլոգիայից, այլև մարդու գործնակերպից: Որակը՝ դա տվյալ ծեռնարկության ողջ գործունեության (համակարգի) միակցված արդյունքի համարիվն է: Սա նշանակում է, որ որակի հակոռությանը կառավարիչների խնդիրն է: Այդ տեսակետից գործուրյան մեջ է դրվում ISO-9000-ը: Ներկայումս, եթե որևէ ծեռնարկություն ցանկանում է գործ ունենալ արեմայան ընկերությունների հետ, ապա ISO-9000-ը վերջիններիս կողմից դիտարկվում է որպես տվյալ ծեռնարկության գնահատման չափանիշ:

- ISO-ի տարածման խթանումը

Հայաստանում ISO-ին վերաբերող հարցերով գրադպում է Վարչապետի վերահսկողական կազմակերպությունը՝ SARM-ը (Հայաստանի չափարանության, հավաստագրման և մերուդարանության վարչությունը): Կառավարությունն աստիճանական անցում է կատարում ազգային արդյունարեական ստանդարտներից (ՀՍՏ), որոնք ելակետ ունեն ԳՈՍՏ-ը, դեպի ISO-ի վրա հիմնված ստանդարտները: Հայաստանը հանդիսանում է ISO-ի կազմակերպական անդամը և իր մասնակցությունն է քերում վերջինիս այնպիսի մարմինների գործունեությանը, ինչպիսիք են CASCO-ն (Համապատասխանության գնահատման համաձայնություն), DEVCO-ն (Զարգացող երկրների հարցերով համաձայնություն) և այլն: Ըստ սույնի, Կառավարությունը սրբարագրում է Հայաստանում ներդնել ISO-9000-ը և -14000-ը: Մակայն, առ այսօր ոչ հիմնադրվել է ISO-ի հավաստագրմամբ գրադպուղ որևէ պաշտոնական հաստատություն, և ոչ էլ ծեռնարկվել է որևէ գործունեություն, որը կտաներ ծեռնարկությունների կողմից ISO-ի ստանդարտների որդիգրմանը: Ինչ վերաբերում է հավաստագրմանը, ապա Կառավարությունն ուսումնասիրում է Ըստեցարիայի SGS-ի կամ Մեծ Բրիտանիայի ITS-ի հետ համապատասխան պայմանագիր կնքելու հնարսությունը: Զեռնարկությունների մեծ մասը տեղյակ չի արևմտյան երկրների ֆիրմաների հետ գործարքներ կնքելու առումով ISO-9000-ի ունեցած կարևորության մասին, և սա կարող է լրջորեն խոչընդոտել երկրից ապրանքների արտահանման խրանումը: Հետեւարար, Կառավարությանը խորհուրդ է տրվում անհապես նախաձեռնել հետևյալ գործողությունները:

ա) ISO-9000-ի տարածումը ձեռնարկություններին

ISO-ի հավաստագրման ծեռք թերումը զգալի ժամանակ է սրահանջում: Նսխափառատվագրելու պահից մինչև հավաստագրի ծեռք թերումը շատ դիմորդ ձեռնարկությունների մոտ մեկ տարի է ճգփում: Հետևաբար, Կառավարությունից պահանջվում է անցկացնել տեղեկասփյուռ սեմինարներ ձեռնարկությունների համապատասխան աշխատողների, ինչպես նաև դեկանդ անձնակազմի համար:

բ) ISO-9000-ի համար հատուկ օգնության սխեման

ՓՄՁ-երի համար ISO-9000 հավաստագրի ձեռքբերումը համեմատարար քանի միջոցառում է (նախասկատրաստման ու հավաստագրման բոլոր ծախսերը միասին կազմում են 5000-10000 ԱՄՆ դրամ): Քանի որ ISO-ն՝ դա համաշխարհային ստանդարտ է, որեմն հարկ է, որ Կառավարությունն ընդունի հայկական ձեռնարկությունների կողմից ISO ստանդարտների ձեռքբերմանը պետական մակարդակով աջակցելու կարևորությունը, ինչպես որ ժամանակին դա գիտակցել է ԱՀԿ-ին անդամությամբ:

Վերև ասվածն իրականացնելու համար հարկ է քննության առնել հետազոտական թիմի կողմից բաժին 5.4.(3)-ում առաջարկված ՓՄՁ-երի աջակցման հիմնադրամի շրջանակներում դիմորդ ձեռնարկություններին որոշակի դեպքերում հատուկ ցածր տոկոսադրույթով առաջնային ֆինանսական աջակցություն ցուցաբերելու տարրերակը:

(6) Մարդկային ռեսուրսների գարգացումը

Հայաստանի խոշորագույն ռեսուրսներից մեկը աշխատումն է: Սոցիալական և տնտեսական վերելքի առանցքային գործոնի՝ մարդկային ռեսուրսների գարգացման համար առաջարկվում է ձեռք առնել հետևյալ 6 քայլերը:

1) Կրթության բյուջեի արդյունավետության բարձրացում, այն է՝

մանկավարժների և դասախոսների հաստիքների արմատական վերանայում

Հայաստանի արդի կրթական համակարգի խոշորագույն հիմնահարցերից մեկն այն է, որ արդեն իսկ սահմանափակ ազգային բյուջեից կրթությանը հատկացված միջոցները միշտ չեն, որ օգտագործվում են արդյունավետ կերպով: Խորրային պատճառը՝ դա դասավանդող հաստիքների ավելցուկն է: Անհրաժեշտ է նախնական 2-ամյա փուլում զգալիորեն կրծատել նշված ավելցուկային աշխատատեղերը: Այս նպատակով հարկ է գալորշել տվյալ անցումային շրջանում կրծատման ենթակա անձանց, օգնել նոր գրադմունք գտնելու այդ մարդկանց համար և ապահովել մասնագիտական վերասկատրաստման հմարավորություն:

Ընդ որում, մինչև աշխատանք գտնելը՝ ստավելագույնը 2 տարի ժամկետով պետորյունը պետք է սահմանի նրանց աշխատավարձը: Միննույն ժամանակ, պահաջանակ է ստնդենտ այնպիսի սրբազնությանը, եթե հնարավոր կիֆնի գգալիորեն բարձրացնել մնացող հաստիքների աշխատավարձը և խրախուսել կրրական գործոններյունը:

Սույն միջոցառումները ցավու և մանկավարժների ու դասախոսների համար և ժամանակավորապես ծանրացնում են պետական բյուջեի բեռլ բայց դրանք առաջին պարտադիր քայլն են կրրության որակի բարեկավման ճանապարհին:

2) Գյուղական վայրերում կրթական հաստատությունների

Կազմակուժման կասեցում

Գյուղական վայրերում կրրության՝ բաժին 2.2.3.(5)-ում ցույց տրված կազմակուժումը կսանցնելու նպատակով անհրաժեշտ է բննության առնել այնպիսի միջոցների ծեռնարկումը, ինչպիսիք են գյուղական վայրերում աշխատող ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը և դասավանդան սրբազնության բարեկավումը:

Ներկայումս խորհրդարանը բննարկում է «պետական պատվերի» օրինագիծը, որը նպատակ ունի ապահովել շրջանային պետական ծառայողների և իրավարանների պատրաստումը, և որտեղ պարունակում է դրույր այն մասին, որ ուսանողները, պետորյան կողմից նրանց դպրոցական ուսուցման ծախսերը հոգալու դիմաց, պարտավոր են ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո սահմանված մի քանի տարվա ընթացքում աշխատել ըստ իրենց նաևնագիտության: Այս համակարգը պետք է օգտագործվի գյուղական շրջաններին դասավանդող հաստիքների ապահովելու նպատակով:

3) Սկզբնական կրթության չափանիշների սահմանում

Ընդլայնվող պահանջարկ վայելող մասնավոր դպրոցների կարգավիճակը նախապես սահմանելու նպատակով նախ պետք է որոշարկել կրրության այն չափանիշները, որոնք կծառայեն որպես ստանդարտ՝ լիազորելու համար այս կամ այն մասնավոր դպրոցի արտոնագրում: Բայց կրթության և գիտության նախարարության մի բարձրաստիճան պաշտոնյայի, տվյալ չափանիշների սահմանումը կպահանջի ևս 2 տարի ժամանակ: Մակայն, որպեսզի աշխատանքները հնարավոր լինի ավարտել ավելի կարճ ժամկետում, մենք առաջարկում ենք ավելացնել սույն նախագծի վրա աշխատող հաստիքների թիվը:

4) Աշխատողների վերաորակավորման նպատակով համալսարանների և

ինստիտուտների արդյունավետ օգտագործում

Ազգային համակարգի փոփոխությանը համապատասխան պետք է ներդնել արժեքների

նոր համակարգ: Բացի այդ, տնտեսական գործոներյան գլոբալացմանը գուգահեն, իրավական համակարգը, կառավարումն ու հաշվապահությունը պետք է ներդաշնակության բերքեն միջազգային ստանդարտների հետ: Ելնելով նման փոփոխություններից, կարևոր է վերակրթել աշխատուղ ազգարնակչությանը, որպեսզի վերջինս կարողանա հարմարվել փոփոխված ժամանակներին: Համապարանները պետք է բացեն իրենց բարանները և աշխատուղ մարդկանց մատուցեն նորագույն փորձն ու գիտելիքները՝ հետևելով միջազգային ձևոնարկների ուղղորդմանը: Այս նպատակով կարելի է դիմել նաև աջակցման օտարերկրյա կազմակերպություններին՝ խնդրելով Հայաստան առաքել համապատասխան ոլորտների մասնագետների:

5) Ուսուցիչների վերապատրաստում

Ուսուցիչների վերապատրաստումը ևս կան նշանակություն ունի: Կիրառելով արտասահմանում վերապատրաստման ծրագրերը, որոնք ներկայումս իրականացվում են ամերիկյան աջակցող խմբերի կողմից, պետք է լայնորեն տարածել ուսուցիչների վերապատրաստման և նողելային դպրոցների միջոցով ձևոր բերքով կրթական նոր նյանակների փորձն ու հմտությունները:

6) Մասնագիտացված տեխնիկական դպրոցների բարեփոխում և

վերակազմավորում

Մասնագիտացված տեխնիկական դպրոցներում դասսավանդողների հաստիքների հայրաբերակցությունն ուսանողների բվին բերվել է բաժին 2.2.3 (5)-ում: Այս հաստատությունները պետք է վերածվեն այնպիսի դպրոցների, որոնք ի վիճակի կինեն բավարարել Հայաստանի նոր կրթական սկահանջմունքները: Սա նշանակում է, որ հարկ է պահպանել դրանց փոքր մասը, իսկ մնացածը՝ վաճառել մասնավոր դպրոցներին: Ուսուցչական հաստիքները պետք է նշանակալիորեն կրնատվեն՝ բողներով միայն լավագույն աշխատողների մի փոքր քանակ, որոնք ունակ են յուրացնել տվյալ փուլում պահանջվող նոր տեխնոլոգիական գիտելիքները: Գլուոցների վաճառքից գոյացած գումարները պետք է ուղղվեն բարձրակարգ դասավանդողների վարձմանը և ուսումնական հարմարությունների բարելավմանը: Մարդկային ռեսուրսների զարգացման վերջնական նպատակը՝ դա հայ հասարակության պահանջները բավարարելուն կոչված աշխատումի կրումն ու պատրաստումն է, որի արդյունքում կշահեն և անհատները, և ողջ հասարակությունը: Հայաստանը պետք է ձգտի հասնել հետևյալ օգտավետ «հոսքի» ապահովմանը:

որակյալ աշխատում → տնտեսության վերականգնում → աշխատումի նոր պահանջարկ

Իրենց մասնագիտական գիտելիքները գործադրելու համար համապատասխան աշխատանք ակնկալով մարդկանց ցանկությունների իրականացման հնարավորությունները Հայաստանի տնտեսության զարգացմանը գուգընքաց, անկատկած, գնալով կրնջայնվեն:

(7) Գիտա-հետազոտական ինստիտուտների (ԳՀԻ) վերակազմավորումը և արդյունավետ օգտագործումը

Հայաստանում գիտական տեխնոլոգիաները և հետազոտումներն ու մշակումները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է բաղաքականությունը տանել հետեւյալ երեք ուղղություններով:

- Կան բազմարիվ գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք հիմնվել են ուշ ՆԽՄ-ի արդյունաբերական զարգացումն ապահովելու նպատակով: Երկրի ներքին պահանջներին համապատասխան, հարկավորել է կրծունել այդ գիտահետազոտական ինստիտուտների րիվը:
- Միջոցների անբավարարության խնդիրը լուծելու նպատակով կարելի է խրանել համագործակցությունն օտարերկրյա ձեռնարկությունների և կամ ԳՀԻ-ների հետ՝ պայմանագրային հետազոտության և համատեղ հետազոտական աշխատանքի ձևով: Անհրաժեշտ է ստեղծել նման համագործակցությունը խրանող մի համակարգ:
- Գոյություն ունեն բարձր մակարդակի հետազոտություններ կատարող շատ ԳՀԻ-ներ: Պահանջվում է խրանել նման հետազոտությունների արդյունքներն օգտագործող արտադրությունների կազմակերպումը:

1) ԳՀԻ-ների վերակազմավորումը և փոքրացումը

Խորհրդային ժամանակներում Հայաստանում տեղակայվել են բազմարիվ ԳՀԻ-ներ: Ի հետեւյալ ՆԽՄ-ի փլուզման և երկրի անկախացման, որոշ ԳՀԻ-ներ հազիվ թե անհրաժեշտություն են ներկայացնում Հայաստանի համար: Օրինակ, ԳՀԻ-ների մի մասը փոխվագված է եղել ոչ թե Հայաստանում, այլ Խորհրդային Սիուրյան այլ վայրերում տեղաբաշխված արդյունաբերական արտադրածյուղերի հետ: Նույնիսկ Հայաստանում առկա ճյուղերին շաղկապված լինելու պարագային իրավիճակը մնում է նույնը, քանի որ այդ ճյուղերը Խորհրդային Սիուրյան կազմալուծման արդյունքում իսպառ քայրայվել են և չունեն վերականգնման որևէ լուրջ հեռանկար: Գործնականում, հաշվի առնելով պետական բյուջեի համեստ ծավալը, անհնարին է պահպանել ներկայումս Հայաստանում եղած բոլոր ԳՀԻ-ների գոյությունը: Հայաստանում չի իրականացվել որևէ արմատական վերակազմավորում և կամ մաշտարմերի փոքրացում: ԳՀԻ-ներին հատկացվում են շատ սահմանափակ

հետագոտական միջոցներ (բոլորին համարյա թե միևնույն գումարը) և, ի արդյունք, ԳՀԻ-ներն ամսնորեք տառապում են ֆինանսական միջոցների սուր սրվաստոքյունից:

Մենք կարծում ենք, որ Խորհրդային ժամանակներից մնացած ԳՀԻ-ները պիտք է վերկազմավորվեն և կրօնատվեն՝ համաձայն արդյունաբերական կառուցվածքի և ազգային բյուջեի մեծության: Այսուհետեւ, ելնելով Հայաստանի տապագա զարգացման տևակետից հերանկարային ճյուղերի պահանջներից, այդ ինստիտուտներին հարկ է հասկացնել սահմանափակ նպատակային ֆինանսավորում: Օրինակ, գերակայություն կարող է տրվել բիոտեխնոլոգիային, համակարգչային գիտությանը և լենկութեալիային:

2) Օտարերկրյա ձեռնարկությունների և հետագոտական ինստիտուտների հետ համագործակցումը

Օտարերկրյա ձեռնարկությունների և հետագոտական ինստիտուտների հետ համագործակցումը՝ դա մի ուղի է, որը բոլով կառավարության սահմանափակ բյուջեի պայմաններում ձեռք բերել հետագոտումների համար պահանջվող անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Ներկայումս այսուղ կան մի շարք ԳՀԻ-ներ, որոնց կառարած որոշակի հետագոտական աշխատանքները վաստակություն նն վայելում օտարերկրյա ձեռնարկությունների և/կամ ԳՀԻ-ների շրջանում: Սակայն, նման համագործակցությունը հիմնականում ձևավորվել է գիտնականների միջև անձնական և պատեհական շփոմների հիման վրա:

Սույն հետագոտական բիմբ մեծ ուշադրություն է դարձնում միկրոբիոլոգիայի և բիորիմիայի բնագավառներում հայկական ԳՀԻ-ների ունեցած զգալի ներուժին և ԳՀԻ-ների արդի վիճակն ու հնարավոր համատեղ հետագոտական աշխատանքի ոլորտները ներկայացնում է այս բնագավառներում մասնագիտացած ճապանական աշխարհահոչակ վերամշակող ընկերություններից մեկին: Վերջինս հետաքրքրություն է դրսեւրում և նարտին Հայաստան է գործուղում իր երեք մասնագիտների: Ի արդյունք, ընկերությունը հոմիս ամսին համատեղ հետագոտական աշխատանքի պատվեր ստեց երկու հայկական ԳՀԻ-ների և համաձայնագիր կնքեց գիտնականների փոխանակման մասին:

Կարող են լինել ԳՀԻ-ներ, որոնք օժտված են մեծ ներուժով, բայց ի վիճակի չեն գտնել իրենց ունակությունները լիովին դրսերելու հնարավորություններ, բանի որ նրանք հայտնի չեն այլ երկրներում: Ինչ վերաբերում է օտարերկրյա ձեռնարկություններին և/կամ ԳՀԻ-ներին, ապա Հայաստանի ԳՀԻ-ների հետ նման համագործակցությունն անշափ օգտակար կլինի, քանզի նրանք կարող են օգտվել տաղանդավոր գիտնականների ծառայություններից՝ վճարելով ավելի ցածր գին, քան իրենց հայրենի երկրներում: Մասնագորապես, առավել շահավետ կլինին ֆունդամենտալ հետագոտությունները, երբ տարրեր զաղավարների

փոխանակումը շատ կարեղք նշանակություն տնի, և այն ոլորտները, որ փորձեր տնելու նախակով պահանջվում է գիտական աշխատողների ստվար բարանակ:

Երազործման փուլում գտնվող համագործակցության օրինակ է այն, որ ճանդանական համալսարաններից մեկը հրավիրել է ԳՀԻ-ուն դարակազմուրյունն ուսումնասիրող խմբի ղեկավար մի հայ գիտնականի: Վերջինս ճանդանական գիտնականների հետ համատեղ իրականացնում է հետազոտական աշխատանք, և միաժամանակ հայկական ԳՀԻ-ն կառարում է փորձեր՝ հետևելով էլեկտրոնային փոտոտվ առարվաղ համարկատախան հրահանգներին: Եթե հայտնի գիտնականը նոր միայն իրավիրվեր, ապա հայկական ԳՀԻ-ն մինչ այդ «գատարկ տեղ» դարձած կիթեր: Ռերված օրինակը կարող է մյուս գիտնականներին հուշել շարունակելու իրենց հետազոտումները և պահպանելու կամ զարգացնելու հայկական ԳՀԻ-ների կարողութակությունը:

Օտարերկրյա ձեռնարկությունների և ԳՀԻ-ների հետ համագործակցությունը խրանելու նպատակով ամերամեջտ է մի համակարգ, որը կոչված կլինի սահմանել հայկական ԳՀԻ-ների կազմակերպական կառուցվածքը, հաստիքների բարանակը և հետազոտությունների շրջանակը (օրինակ՝ թեմաների ամփոփագիրը): Կարենը և սկսել որևէ, թեկուզ փոքր, հետազոտական պայմանագրի կնքումից կամ համատնդ ծրագրի նախաձեռնումից: Եթե այս փոքր նախագծերի միջոցով հաստատվի, որ առկա է մեծ ներուժ, ապա դրանց կարող են հաջորդել առավել խոշոր ծրագրեր կամ ավելի սերտ փոխարարաբերություններ:

ՄԱԶՃ-Ը (UNDP) նախագծել է օգնության մի ծրագիր՝ «Բարձր տեխնոլոգիական մտավոր ուսուրաների շոկայավարումը» անվանմամբ: Արժե ուշադրության արժանացնել այս ծրագիրը:

Ծրագրի ամփոփագիրը հետևյալն է.

ա) բարձր տեխնոլոգիական հետազոտումների և մշակումների կազմակերպությունների
(ԲՏՀՄԴ) գնահատումը և ընտրության կատարումը.

բ) մտավոր ուսուրաների միջազգային շոկայների գատորոշումը.

գ) բարձր տեխնոլոգիական հետազոտումների և մշակումների արտահանման
մեխանիզմի կառուցավորումը.

դ) ընտրված ԲՏՀՄԴ-երի և նրանց ներուժի առևտրայնացումը, ինչպես նաև
գործընկերության կազմակերպումը.

ե) կրթության և վերապատրաստման գործիքացի առևտրայնացումը:

3) ԳՀԻ-ների հետազոտումների արդյունաբերացումը և առևտրայնացումը

Բարձր նակարդակի հետազոտություններ վարող ԳՀԻ-ները՝ դրանք Հայաստանի

արդյունաբերական զարգացման ներուժային «ծխլեր» են: Այսուհանդերձ, թիւ և արդյունաբերացման կամ տունտրայնացման հաջող օրինակները: ԳՀԻ-ների հետազոտման արդյունքների արդյունաբերացման կամ տունտրայնացման խոշշնորհները բվարկվում են ստորև:

ա) աշարդյունաբերացման կամ տունտրայնացման համար պահանջվող միջոցների սլաքառը.

թ) հետազոտության արդյունաբերացման կամ տունտրայնացման համար գործընկերների (օրինակ՝ օտարերկրյա ձեռնարկությունների) որոնման նղանակների սահմանափակությունը: Գիտնականներն ու ինժեներները սովոր չեն «վաճառել» խթեց արտադրանքը, քանի որ Խորհրդային Միուրյան օրոք խիստ սակավ էին ուղղակի շփումներն օտարերկրյա ձեռնարկությունների կամ ԳՀԻ-ների հետ.

զ) Խորհրդային ժամանակներում, ընդհանուր առմամբ, ֆունդամենտալ հետազոտությունը համարվում էր գերադաս, իսկ կիրառական հետազոտությունը՝ ստորադաս աշխատանք: Նոյնիսկ հիմա էլ այդ միտունքը շարունակվում է, և կիրառական հետազոտումների նշանակությունը բերագնահատվում է:

Արդյունաբերացմանը և տունտրայնացմանը տատարելու նպատակով հարկ է ձեռք առնել հետևյալ միջոցառումները:

Հատկանիս պետք է ընդլայնել արտասահման ուղղվող տեղևկատվությունը: Արժեք բնուրյան առնել գործող «Առևտի կետ»-ի հնարավորությունների կիրառման և ԳՀԻ-ների կողմից կատարվող հետազոտումների ուղղվածության ու բովանդակության մասին օտարերկրյա ձեռնարկություններին տեղյալ դարձնելու հարցը: Բացի այդ, ԳՀԻ-ները կարող են մասնակցել տունտրային ցուցահանդեսներին և այնուղի կ տեղեկություններ սփուր իրենց իրականացրած հետազոտական աշխատանքների վերաբերյալ:

ա) Գիտնականների կրրումը

Պետք է վերապարաստել գիտնականներին, որոնք սովոր չեն տունտրայնացման իրենց հետազոտության արդյունքները: Սա վերաբերում է, նաև ավագանության մասին սեփականության հետ կապված գիտնիքներին: ՍԱԶԾ-ի ծրագիրն այս առումով բարփոր հիմք է հանդիսանում:

թ) Ֆինանսական աջակցումը

Զարգացման բանկը պետք է ֆինանսավորի բարձր տեխնոլոգիական մտավոր ուսուրացների օգտագործում ննըադրող արտադրության ստեղծումը:

5.3.3. Ենթակառուցվածքները

(1) Ընդհանրագիրը

Ինչպես բացատրվել է բաժին 2.2.4.-ում, Երկրի Ենթակառուցվածքներում պահանջվում է անել շատ ու շատ բարեխավումներ, նախքան դրանք կարենի կլինի համեմատել զարգացած և նույնիսկ մի շաբթ զարգացող Երկրներում առկա ներակառուցվածքների հետ: Ուստի սրբազն և այլ սակավ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը - ահա՛ Հայաստանի Կառավարության առջև կանգնած Երկու գլխավոր իիմնահարցերը:

Ենթակառուցվածքներից յուրաքանչյուրի հիմնման, կառուցման, բարեխավման, գնումների և այլնի հետ կապված հարցերը բննարկելու փոխարեն, մենք կշարադրենք այն մոտեցումը, որ հարկ է կիրառել բարեխավումների իրականացման գործում:

(2) Ընդհանուր մոտեցումը

Սակավ ռեսուրսներն արդյունավետ կօգտագործվեն, եթե մշակվի հիմնարար պլան և գրանում ներառվեն կամ միավորվեն առանձին իրականացվող բայրու նախագծերը:

Կան գործողության մեջ գտնվող և ֆինանսավորման տարրեր մակարդակ ունեցող մի քանի ծրագրեր, որոնք ուղղված են Էներգետիկայի, գյուղատնտեսության, ոռոգման համակարգի, գրոսաշրջության, փոխադրումների և կրթության զարգացմանը: Մեկ միասնական ուղղման կամ ուղղության շուրջ տարրեր ծրագրերի համախմբությունը կարող է հասցնել ավելի խոշոր ու տևական արդյունքների, քան եթե դրանք կատարվեն առանձին-առանձին, ըստ որում առանց ծախքների նշանակալի մեծացման կամ դրված խնդիրների բարդացման:

Հատկապես կարենք է գրոսաշրջության զարգացման հեռանկարը: Պատճառն այն է, որ բնակչության ճանապարհների և Ենթակառուցվածքի մյուս բաղկացուցիչների պահպանումն ու շահագործումը ծախքային բեռ են կառավարության վրա, գրոսաշրջության նպատակներով դրանց օգտագործումը կրենի հետեւալ դրական տնտեսական արդյունքներին.

- նախ, գրոսաշրջության զարգացումը կուղեկցվի արտաքին նկամուտների Երկարաժամկետ ներհուսուվ.
- Երկրորդ, այն կիրանի հարակից շատ ճյուղերի զարգացումը և կատեղի նոր աշխատատեղերը: Դրան գուգահեռ, սննդամատակարարման պահանջը կրերի գյուղատնտեսության որակական հատկանիշների բարեխավմանը.
- Երրորդ, գրոսաշրջության ռեսուրսներ ունեցող մարգերությունների կանեն եկամուտներն ու աշխատատեղերը.
- չորրորդ, օտարերկրացիներին բավարարող ծառայությունների մատուցումը կրերի սպասարկման ճյուղերի ընդհանուր մակարդակի բարձրացմանը: Ավելի բարձր որակի

ծառայություններն իրենց հերքին հնարավոր կրտսերնեն գրոսաշրջուրյան ճյուղի Ա տվելի մեծ առաջբնրացը:

(3) Հակամենաշնորհային քաղաքականությունը Ենթակառուցվածքներում

Ենթակառուցվածքների որակը բարձրացնելու և ծախսերը կրճատելու նպատակով անհրաժեշտ է վարել հակամենաշնորհային քաղաքականություն: Ինչպես նկարագրվել է 2.2.3.(1)-ում, մենաշնորհների դևմ օրենքը առայժմ գոյուրյուն չունի:

Օրինակ, ինչ վերաբերում է հետահարդրդակցուրյանը, «Արմենտեր»-ը վաճառվել է հունական ՕՊԵ ընկերուրյանը՝ 15-ամյա բացառիկ իրավունքով: Նման բացառիկուրյունը կարող է բացասական ներգրածություն ունենալ որակի և ծախսերի բարելավման, իսկ ապա նաև՝ մասնավոր հաստվածի գարզացման վրա: Եթե ՕՊԵ-ն, իր ներդրումները վաղ հատուցելու համար, Էականորուն բարձրացնի մատուցվող ծառայությունների սակագները, ապա դա կրերի հայկական բոլոր ճյուղերի նրգունակուրյան անկմանը:

(4) Գործառության բարելավումը

